

Գլուխ II

ՊԵՏԵՐՐՈՒՐԳՈՒՄ ամառն անցավ սովորակ գրական գործունեությամբ: Ես պատրաստում էի գրքերս նոր հրատարակության համար, կարդում սրբագրությունները և այլն: 1915թ-ի սարսափելի ամառն էր՝ իր աստիճանաբար մռայլ մթնոլորտով, որից չնայած իմ բոլոր ջանքերին ես ոչ մի կերպ չէի կարողանում ազատվել: Պատերազմն այժմ Ռուսաստանի տարածքում էր ընթանում և ավելի ու ավելի էր մոտենում մեզ: Ամեն բան սկսում էր սասանվել: Մարդասպանության դրդող ծածուկ միտումը, որն այդքան բան էր կանխորոշել ռուսական կյանքում, առավել բացահայտ էր դառնում: «Ուժերի փորձությունն» ընթացքի մեջ էր: Տպագրիչները մշտապես գործադուլ էին անում: Իմ աշխատանքն ընդհատվել էր: Ես արդեն սկսում էի մտածել, որ աղետը շուտով վրա կհասնի և թույլ չի տա ինձ իրականացնելու իմ մտադրությունները: Սակայն մտովի ես հաճախ վերադառնում էի մոսկովյան իմ գրույցներին: Հիշում եմ, որ երբեմն, երբ իրավիճակը հատկապես բարդանում էր, ես ինքս ինձ ասում էի. «ամեն ինչից կիրաժարվեմ և կգնամ Մոսկվա Գ.-ի մոտ»: Այս մտքից հոգիս թեթևանում էր:

Ժամանակն անցնում էր: Մի օր, երբ արդեն աշուն էր, ինձ հեռախոսի մոտ կանչեցին. լսեցի Գ.-ի ձայնը: Նա մի քանի օրով եկել էր Պետերբուրգ: Ես անմիջապես այցելեցի նրան: Բազմաթիվ հարցերով նրա մոտ եկած մարդկանց հետ ունեցած գրույցների միջև, նա խոսեց ինձ հետ այնպես, ինչպես խոսել էր Մոսկվայում:

Երբ հաջորդ օրը նա հեռանում էր, ասեց, որ շուտով վերադառնալու է: Երկրորդ այցելության ժամանակ, երբ ես նրան պատմեցի մի խմբի մասին, որին այցելել էի Պետերբուրգում, և որտեղ քննարկվել էին բոլոր հնարավոր թեմաները՝ սկսած պատերազմից և վերջացրած հոգեբանությամբ, նա ինձ ասեց, որ նմանատիպ խմբերի հետ ծանոթությունն արդյունավետ կարող էր լինել, քանի որ նա մտադիր էր նույնատիպ գործունեություն ծավալել Պետերբուրգում, ինչպես դա անում էր Մոսկվայում:

Նա մեկնեց Մոսկվա և խոստացավ վերադառնալ երկու շաբաթից: Ես նրա մասին պատմեցի իմ ընկերներից մի քանիսին և մենք սկսեցինք սպասել նրան:

Նա կրկին վերադարձավ կարճ ժամանակով: Այնուամենայնիվ, ես հասցրեցի նրա հետ ծանոթացնել ընկերներիցս մի քանիսին: Ինչ վերաբերում էր իր ծրագրերին և մտադրություններին, նա ցանկանում էր իր աշխատանքի մասշտաբը ընդլայնել, հանրության համար դասախոսություններ կարդալ, մի շարք փորձարկումներ կատարել, ցուցադրումներ կազմակերպել՝ իր աշխատանքի մեջ առավել լայն և տարբեր պատրաստվածություն ունեցող մարդկանց ներգրավվելու նպատակով: Այս ամենն ինձ հիշեցնում էր այն մասին, ինչ լսել էի Մոսկվայում: Սակայն ես դեռևս հստակ չէի պատկերացնում, թե ինչ «փորձարկումների» և «ցուցադրումների» մասին էր խոսքը: Այս ամենը պարզ դարձավ միայն ավելի ուշ:

Հիշում եմ Նևսկու վրա փոքր սրճարաններից մեկում սովորականի պես Գ.-ի հետ ունեցած իմ զրույցը:

Գ.-ն մանրամասնությամբ պատմեց իր աշխատանքի համար հավաքած խմբի կազմակերպվածության և նրանց ունեցած դերի մասին: Մեկ կամ երկու անգամ նա օգտագործեց «Էգոթերիկ» բառը, որը՝ ես նրանից մինչ այժմ չեի լսել, և ինձ շատ հետաքրքրեց, թե նա ինչ նկատի ուներ: Սակայն, երբ փորձեցի նրան ընդհատել և պարզել, թե նա ինչ ի նկատի ուներ «Էգոթերիկ» ասելով, նա խուսափեց պատասխանից:

-Դա կարևոր չէ, կարող ես կոչել այն ինչպես ցանկանաս, - ասեց նա: Դա չէ էականը: Էականն այն է, որ «խումբն» ամեն ինչի սկիզբն է: Մարդը ոչինչ չի կարող անել մենակ, ոչինչ չի կարող ձեռք բերել: Իսկական դեկավար ունեցող խումբը կարող է ավելին անել:

Դուք չեք գիտակցում ձեր իրավիճակը: Դուք գտնվում եք բանտում: Եթե դուք ինչ-որ մարդ եք, ապա ձեր միակ ցանկությունը փախչելն է: Բայց ինչպե՞ս կարելի է փախուստի դիմել: Անհրաժեշտ է պատի տակ թունել փորել: Մարդը մենակ ոչինչ չի կարող անել: Բայց ենթադրենք, որ կա տասը կամ քսան մարդ. եթե նրանք հերթով աշխատեն և եթե մեկը մյուսին քողարկի, նրանք կկարողանան ավարտին հասցնել թունելը/անցումը և փախչել:

Դեռ ավելին՝ ոչ ոք չի կարող փախչել բանտից առանց այն մարդկանց օգնության, *ովքեր նախկինում դա արել են*: Միայն նրանք կարող են ասել, թե ինչպես կարելի է կազմակերպել փախուստը, միայն նրանք կարող են համապատասխան գործիքներով ապահովել խարտոցով կամ այլ անհրաժեշտ միջոցներով: Սակայն մեկ բանտարկյալը ինքնուրույն չի կարող գտնել այդ մարդկանց կամ կապ հաստատել նրանց հետ: Անհրաժեշտ է այդ ամենը կազմակերպել: Ոչինչ հնարավոր չէ ձեռք բերել առանց կազմակերպելու:

Գ.-ն իր զրույցներում հաճախ էր անդրադառնում «բանտի» և «բանտից փախչելու» այս օրինակին: Երբեմն նա զրույցը հենց դրանից էր սկսում, այնուհետև մեջբերում իր սիրելի խոսքը՝ որպեսզի բանտարկյալը փախուստ կատարելու հնարավորություն ունենա, առաջին հերթին նա պետք է *գիտակցի, որ բանտում է գտնվում*: Քանի դեռ նա չի գիտակցում դա, քանի դեռ հավատում է, որ ազատ է, որևէ հաջողության հասնելու հավանականությունը բացառվում է: Որևէ մեկը չի կարող օգնել նրան կամ ազատ արձակել ստիպողաբար՝ իր կամքին դեմ, իր ցանկություններին հակառակ: Եթե ազատությունը կարելի է ձեռք բերել, ապա միմիայն տքնաջան աշխատանքի և ահռելի ջանքերի արդյունքում, և ամենից առաջ՝ որոշակի նպատակներին ուղղված գիտակից ջանքեր գործադրելու շնորհիվ:

Աստիճանաբար ես ավելի ու ավելի մեծ քանակությամբ մարդկանց ծանոթացրեցի Գ.-ի հետ: Ամեն անգամ, երբ նա այցելում էր Պետերբուրգ, ես մասնավոր տներում կամ արդեն գոյություն ունեցող մասնավոր խմբերի մոտ զրույցներ և դասախոսություններ էի կազմակերպում, որոնց մասնակցում էր Գ.-ն: Սովորաբար այցելուների թիվը կազմում էր երեսուն կամ քառասուն հոգի: 1916թ-ի հունվարից ի վեր Գ.-ն ամեն երկու շաբաթը

մեկ, երբեմն իր մոսկվացի աշակերտների հետ, կանոնավոր կերպով այցելում էր Պետերբուրգ: Ես չէի հասկանում, թե ինչու էին հանդիպումները այդ կերպ կազմակերպվում: Ինձ թվում էր, որ Գ.-ն դրանք անտեղի բարդացնում էր: Օրինակ, նա շատ հազվադեպ էր թույլ տալիս ինձ նախօրոք հանդիպումներ կազմակերպել: Հանդիպումների ավարտին սովորաբար հայտարարվում էր, որ Գ.-ն հաջորդ օրը վերադառնալու էր Մոսկվա: Հաջորդ առավոտ նա հանկարծ կհայտնեի, որ որոշել է մնալ մինչ երեկո: Ողջ օրն անց էր կացնում սրճարաններում, ուր գալիս էին մարդիկ՝ ցանկանալով տեսնել Գ.-ին: Երեկոյան՝ հանդիպումից ընդամենը մեկ կամ մեկ ու կես ժամ առաջ, Գ.-ն ինձ կասեր. «Այս երեկո հանդիպում չկազմակերպե՞նք: Զանգահարեք նրանց, ովքեր կցանկանային գալ և հայտնեք նրանց մեր հանդիպման վայրը»: Ես սովորաբար շտապում էի զանգահարել, սակայն, իհարկե, երեկոյան ժամը յոթին կամ յոթն անց կես բոլորն արդեն զբաղված էին, և ես շատ քչերին էի կարողանում հավաքել: Ոմանց էլ, ովքեր Պետերբուրգից դուրս էին ապրում՝ Ցարսկոյում և այլ վայրերում, երբևիցե չէր հաջողում գալ մեր հանդիպումներին: Ավելի ուշ ես ամեն ինչ այլ կերպ սկսեցի հասկանալ: Իսկ Գ.-ի հիմնական դրդապատճառներն առավել հստակ դարձան ինձ համար: Նա ոչ մի դեպքում չէր ցանկանում մարդկանց համար հեշտացնել իր մտքերի հետ ծանոթացումը: Ընդհակառակը՝ նա համարում էր, որ միայն դժվարությունները հաղթահարելու դեպքում, որքան էլ անհարիր կամ պատահական լինեն դրանք, մարդիկ կկարողանան գնահատել նրա մտքերը:

«Մարդիկ չեն գնահատում այն, ինչ հեշտությամբ է տրվում նրանց», - ասեց Գ.-ն: «Եվ, եթե մարդն արդեն իսկ որևէ բան զգացել է, ապա հավատա ինձ, նա ամբողջ օրը կնստի հեռախոսի մոտ և կսպասի հրավերքին, կամ ինքնուրույն կզանգահարի և կտեղեկանա: Իսկ նրանք, ովքեր ակնկալում են, որ իրենց կխնդրեն և կխնդրեն նախօրոք՝ նրանց հնարավորությունն տալով կազմակերպելու իրենց գործերը, ապա թող սպասելով էլ մնան: Իհարկե նրանց համար, ովքեր Պետերբուրգում չեն, դա իսկապես խնդիր կարող է հանդիսանալ: Բայց մենք որևէ բան չենք կարող անել: Ավելի ուշ, միգուցե, մենք հստակ օրեր նշանակենք հանդիպումների համար: Սակայն ներկայումս դա անհնարին է: Մարդիկ իրենք պետք է հայտնվեն այստեղ՝ գնահատելով այն, ինչ լսել են»:

Այս ամենը և շատ ուրիշ բաներ ինձ համար որոշ չափով դեռևս հարցականի տակ էին գտնվում: Բայց Գ.-ի դասախոսությունները, և ընդհանրապես, այն ամենն, ինչ նա ասում էր հանդիպումների ժամանակ և հանդիպումներից դուրս, ինձ ավելի ու ավելի էին հետաքրքրում:

Հանդիպումներից մեկի ժամանակ ինչ-որ մեկը հարցրեց վերամարմնավորման հնարավորության մասին և արդյոք կարելի է հավատալ հանգուցյալների հետ հաղորդակցման միջադեպերին:

-Ամեն ինչ հնարավոր է,- ասեց Գ.-ն: Սակայն անհրաժեշտ է նաև հասկանալ, որ մարդու գոյը, ինչպես կենդանության օրոք, այնպես էլ մահից հետո, եթե, իհարկե, նա շարունակի գոյատևել մահից հետո, որակապես

շատ տարբեր կարող է լինել: Մարդ-մեքենան, որի դեպքում ամեն բան կախված է արտաքին ազդեցություններից, ում հետ ամեն բան տեղի է ունենում, և ով այս պահին կարող է մի մարդ լինել, մյուս պահին՝ մեկ ուրիշ մարդ, իսկ ուրիշ ժամանակ՝ մեկ այլ մարդ, որևէ ապագա չունի: Նրան հուղարկավորում են, և դա նրա վերջն է: *Հողը հողի է վերածվում*: Սա նրան է վերաբերում: Որևէ հանդերձյալ կյանքի մասին խոսելու համար բյուրեղացում է անհրաժեշտ, մարդու ներքին հատկանիշների միախառնում, ինչպես նաև որոշակի անկախություն արտաքին ազդեցություններից: Եթե մարդու ներսում կա մի բան, որը կարող է դիմակայել արտաքին ազդեցություններին, ապա հենց այդ նույն բանը կարող է նաև դիմակայել ֆիզիկական մարմնի վախճանին: Ինքդ մտորիր՝ ինչպե՞ս կարող է մարդը որևէ բանի դիմակայել, եթե նա, իր մասը կտրելով, ուշաթափվում է կամ մոռանում ամեն ինչ: Եթե մարդու մեջ կա ինչ-որ բան, հնարավոր է՝ այն գոյատևի: Եթե ոչինչ չկա, ապա ոչինչ էլ չի գոյատևի: Բայց նույնիսկ այն դեպքում, եթե որևէ բան կենդանի մնա, ապա դրա ապագան կարող է շատ տարբեր լինել: Ամբողջական բյուրեղացման որոշ դեպքերում, այսպես կոչված «վերամարմնավորումը», կամ ինչպես մյուս դեպքերում են ասում՝ «կյանքն այս աշխարհից այն կողմ», հնարավոր է մահից հետո: Երկու դեպքերում էլ դա «աստեղային մարմնում» կամ «աստեղային մարմնի» օգնությամբ կյանքի շարունակությունն է: Ձեզ ծանոթ է «աստեղային մարմին» արտահայտության նշանակությունը: Սակայն ձեզ հայտնի համակարգերը, որոնք գործածում են այս արտահայտությունը, հայտարարում են, որ *բոլոր մարդիկ* ունեն «աստեղային մարմին»: Դա սխալ է: Այսպես կոչված «աստեղային մարմինը» միաձուլման միջոցով է առաջանում, այսինքն՝ սարսափելի ծանր ներքին աշխատանքի և պայքարի միջոցով: Այն բնածին չէ: Եվ միայն շատ քչերին է հաջողվում «աստեղային մարմին» ձեռք բերել: «Աստեղային մարմնի» ձևավորման դեպքում ֆիզիկական մարմնի վախճանից հետո հնարավոր է դառնում դրա հետագա գոյությունը: Այնուհետև այն կարող է վերածնվել մեկ այլ ֆիզիկական մարմնում: Դա է «վերամարմնավորումը»: Եթե այն չի վերածնվում, ապա ժամանակի ընթացքում մահանում է: Այն անմահ չէ, բայց կարող է ֆիզիկական վախճանից հետո երկար ապրել:

Միաձուլումը, ներքին միասնությունը, սկիզբ է առնում «հակասությունների» հետևանքով, մարդու մեջ «այո»-ի և «ոչ»-ի միջև ընթացող պայքարի հետևանքով: Եթե մարդն ապրում է առանց ներքին պայքարի, եթե նրա մոտ ամեն բան տեղի է ունենում առանց ներքին խռովության, եթե նա շարժվում է այն ուղղությամբ, ուր քամին է փչում, ապա նա կմնա այնպիսին, ինչպիսին որ կա: Սակայն, եթե նրա ներսում պայքար է սկսվում, մասնավորապես, երբ տվյալ պայքարը ստանում է որոշակի բնույթ, ապա աստիճանաբար ձևավորվում են մշտական բնավորության գծեր և նա սկսում է «բյուրեղանալ»: Սակայն բյուրեղացումը կարող է ձևավորվել ինչպես ճիշտ հիմքի վրա, այնպես էլ՝ սխալ: «Հակասությունը» «այո»-ի և «ոչ»-ի միջև պայքարը, հեշտությամբ կարող է ձևավորվել սխալ հիմքի վրա: Օրինակ՝ այս կամ այն գաղափարին ուղղված

մուլեռանդ հավատը կամ «մեղանչելու վախը» կարող է «այո»-ի և «ոչ»-ի միջև չափազանց լարված պայքարի տեղիք տալ, և մարդը կարող է բյուրեղանալ այս հիմքի վրա: Սակայն դա կլինի սխալ, ոչ ամբողջական բյուրեղացում: Նման մարդը չի ունենա հետագա զարգացման հնարավորություն: Հետագա զարգացումը հնարավոր դարձնելու համար անհրաժեշտ կլինի նրան կրկին հալեցնել, որին սակայն կարելի է հասնել տաժանակիր տառապանքների միջոցով:

Բյուրեղացումը հնարավոր է ցանկացած հիմքի վրա: Եկեք դիտարկենք մի իսկական հմուտ ավագակի օրինակ: Ես Կովկասում ճանաչում էի նման ավագակների: Նման ավագակը ճանապարհի վրա գտնվող քարի ետևում հրացանով կկանգնի ութը ժամ՝ առանց շարժվելու: Դուք կկարողանայիք դա անել: Նրա ներսում անընդմեջ պայքար է ընթանում: Նա շոգում է և ծարավում, ճանճերը կծոտում են նրան, բայց նա չի շարժվում: Մյուսը վանական է. նա վախենում է սատանայից: Ամբողջ գիշեր նա գլուխը գետնին է զարկում և աղոթում է: Այսպիսով, բյուրեղացում է տեղի ունենում: Նման ձևով մարդիկ կարող են հասկայական ներքին ուժ առաջացնել, նրանք կարող են տանջանքներին դիմակայել, նրանք կարող են ձեռք բերել այն, ինչ ցանկանան: Մա նշանակում է, որ նրանցում առկա է ինչ-որ հաստատուն և մշտական մի բան: Բայց ու՞մ է դա պետք: Նման մարդը դառնում է «անմահ», չնայած նրանում որոշ չափով պահպանվում է գիտակցությունը: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ նույնիսկ նման դեպքերը հազվադեպ են» :

Ես հիշում եմ, որ այդ երեկոյին հաջորդող գրույցների ժամանակ ինձ զարմացրեց այն փաստը, որ ներկաներից շատերը ամբողջովին այլ կերպ էին ընկալել Գ.-ի ասածները: Նրանց ուշադրությունը գրավել էին Գ.-ի կողմից շարադրած երկրորդական և ոչ այդքան էական նկատառումները, և նրանք միայն դա էին մտապահել: Գ.-ի կողմից ներկայացված հիմնարար սկզբունքները աննկատ էին մնացել: Ընդամենը մի քանիսն էին, որ Գ.-ի ասածի վերաբերյալ էական հարցեր տվեցին: Հարցերից մեկը մնացել է հիշողությանս մեջ.

- Ինչպե՞ս կարելի է որևէ մեկի մոտ «այո»-ի և «ոչ»-ի միջև պայքար առաջացնել,- հարցրեց ինչ-որ մեկը:

- Չոհաբերություն է անհրաժեշտ, - պատասխանեց Գ.-ն: Եթե որևիցե բան չզոհաբերես, ապա ոչինչ չես կարողանա ձեռքբերել: Անհրաժեշտ է այս պահին որևէ թանկագին բան զոհաբերել, երկար ժամանակ զոհաբերել և մեծ զոհաբերություն կատարել: *Սակայն ոչ ընդմիջտ:* Պետք է հասկանալ սա, քանի որ շատ հաճախ մարդիկ չեն հասկանում: Չոհաբերությունը անհրաժեշտ է միայն բյուրեղացման գործընթացի ժամանակ: Երբ ձեռք է բերվում բյուրեղացումը, գրկանքներն ու զոհաբերություններն այլևս անհրաժեշտ չեն: Այդ ժամանակ մարդը կունենա այն ամենն ինչ կցանկանա: Նրա համար օրենքներ այլևս գոյություն չունեն: Նա ինքն իր համար օրենք է :

Այն մարդկանցից, ովքեր գալիս էին մեր դասախոսությունները լսելու, մի փոքր խումբ է ձևավորվում: Նրանք Գ.-ին ունկնդրելու որևէ հնարավորություն բաց չէին թողնում և հանդիպում էին միմյանց հետ նույնիսկ նրա բացակայության ժամանակ: Այսպես սկսեց ձևավորվել Պետերբուրգի առաջին խումբը:

Այս ժամակահատվածում ես շատ ժամանակ անցկացրեցի Գ.-ի հետ և սկսեցի նրան ավելի լավ հասկանալ: Նրա ներքին պարզությունը և անբռնազբոսիկությունը ինձ ստիպում էր ամբողջովին մոռանալ, որ մեզ համար նա հրաշալի և անհայտ աշխարհի ներկայացուցիչն էր: Դեռ ավելին՝ նրանում ամբողջովին բացակայում էր սեթևեթանքը կամ տպավորություն գործելու ցանկությունը: Այդ ամենի հետ մեկտեղ նա իր գործունեության մեջ որևէ անձնական շահ չէր հետապնդում, անտարբեր էր հանգստի և հարամարության նկատմամբ և չէր խնայում ինքն իրեն որևէ գործ անելիս: Երբեմն նրան դուր էր գալիս աշխույժ և ուրախ միջավայրը. նա ֆկագմակերպում էր մեծ ընթրիքներ, գնում էր մեծ քանակությամբ գինի և ուտեստներ, որից ի դեպ ինքը Գ.-ն շատ հազվադեպ էր օգտվում: Շատերի վրա նա համադամասերի տպավորություն էր գործում, ում դուր է գալիս կյանքն ընդհանրապես: Մեզ թվում էր, որ շատ հաճախ հենց ինքը Գ.-ն էր *ցանկանում* նման տպավորություն գործել, չնայած մենք բոլորս էլ գիտակցում էինք, որ այդ ամենը «խաղ է»:

Այն, որ Գ.-ն դեր էր խաղում մենք բացառիկ ուժգնությամբ էինք զգում: Մեր միջև խոսում էինք և ասում, որ երբևիցե Գ.-ին չէինք տեսել և չէինք էլ տեսնի: Ուրիշների դեպքում այս աստիճան «դերասանական խաղը» կեղծավորության տպավորություն կգործեր: Իսկ Գ.-ի մոտ «խաղը» ուժի առկայության մասին էր խոսում: Չնայած, ինչպես արդեն նշեցի, ոչ միշտ, բայց երբեմն դա չափից ավելին էր:

Ինձ հատկապես գրավել էր նրա հումորի զգացումը և «սրբության» կամ «հրաշագործության» հավակնելու բացակայությունը: Սակայն, ինչպես մենք ավելի ուշ համոզվեցինք, նա ուներ հոգեբանական բնույթի արտասովոր երևույթներ առաջացնելու գիտելիքներ և ընդունակություն: Այնուամենայնիվ, նա միշտ ծիծաղում էր այն մարդկանց վրա, ովքեր նրանից հրաշքներ էին ակնկալում:

Նա բացառիկ բազմակողմանի մարդ էր. ամեն ինչ գիտեր և կարող էր ամեն ինչ անել: Նա ինձ մի անգամ պատմեց, թե ինչպես էր Արևելք կատարած իր ճամփորդություններից բերել մի շարք գորգեր: Դրանցից շատերը կրկնօրինակներ էին, իսկ մյուսները գեղագիտական տեսանկյունից որևէ արժեք չէին ներկայացնում: Պետերբուրգ կատարած իր այցելությունների ժամանակ նա նկատել էր, որ գորգերի գինը Պետերբուրգում Մոսկվայի համեմատ ավելի բարձր էր: Եվ ամեն անգամ, երբ գալիս էր Պետերբուրգ, իր հետ գորգերի հակ էր բերում և վաճառում դրանք:

Պատմության մեկ այլ տարբերակի համաձայն՝ նա գորգերը գնում էր Մոսկվայում՝ «Տոկուչկայում» և բերում էր դրանք Պետերբուրգ վաճառելու:

Ես ամբողջապես չէի հասկանում, թե նա ինչու է դա անում, սակայն զգում էի, որ «խաղի» գաղափարի հետ է կապված:

Խալիների վաճառքն ինքնին ուշագրավ էր: Գ.-ն գովազդում էր այդ գորգերը թերթերում, և ամեն տեսակի մարդիկ գալիս էին դրանք գնելու: Նման դեպքերում նրանք Գ.-ին պարզապես մի հասարակ կովկասցի գորգավաճառի տեղ էին դնում: Ես հաճախ ժամերով նստում էի նրա կողքին՝ հետևելով նրա մոտ եկած մարդկանց հետ զրույցին: Նկատել էի, թե ինչպես էր նա երբեմն այդ մարդկանց *թույլ կողմի հետ խաղում*:

Մի օր Գ.-ն կամ շատ էր շտապում, կամ էլ շատ էր հոգնել գորգավաճառի դերից, նա ակնհայտորեն շատ հարուստ, բայց ժլատ մի տիկնոջ, ով ընտրել էր մեծ քանակությամբ նրբագեղ գորգեր և հուսահատված սակարկում էր դրանց գինը, սենյակում գտնվող բոլոր խալիները առաջարկեց իր ընտրած խալիների մեկ քառորդ գնով: Սկզբում տիկինը շատ զարմացավ և շարունակեց սակարկել: Գ.-ն ժպտաց և ասեց, որ կմտածի այդ մասին և պատասխան կտա նրան հաջորդ օրը: Սակայն հաջորդ օրը նա այլևս Պետերբուրգում չէր, իսկ տիկինը որևէ բան ձեռք չբերեց: Նման պատահարներ հաճախ էին տեղի ունենում: Ստանձնելով ճամփորդող գորգավաճառի դերը՝ Գ.-ն կրկին քողարկված մարդու տպավորություն էր գործում և նմանվում Հարուն ալ Ռաշիդին կամ հեքիաթներից անտեսանելի գլխարկով հերոսին:

Մի անգամ՝ իմ բացակայության ժամանակ, նրան այցելում է մի խաբեբա «օկուլտիստ», ով մեծ հարգանք էր վայելում սպիրիտուալիստական շրջանակներում, իսկ ավելի ուշ՝ բոլշևիկների օրոք, դարձավ «դասախոս»: Նա հայտնում է Գ.-ին, որ շատ է լսել նրա և նրա գիտելիքների մասին և ցանկանում է ծանոթություն հաստատել:

Ինչպես պատմեց ինձ Գ.-ն, նա սկսում է իսկական գորգավաճառի դեր խաղալ: Ամենաուժեղ կովկասյան առողջանությունն օգտագործելով՝ նա կոտրատված ռուսերենով սկսում է հավաստիացնել «օկուլտիստին», որ վերջինս սխալվել է, և որ նա ընդամենը գորգեր է վաճառում: Այնուհետև նա անմիջապես սկսում է փռել խալիները՝ առաջարկելով նրան մի քանիսը:

«Օկուլտիստը» հեռանում է՝ համոզված լինելով, որ նրա ընկերները խաբել են:

«Ակնհայտ էր, որ սրիկան մեկ լումա նույնիսկ չուներ, - ավելացրեց Գ.-ն, - հակառակ դեպքում ես մի երկու գորգի փող կքամեի նրանից»:

Մի պարսիկ էր նրան այցելում՝ գորգերը նորոգելու համար: Ես նկատեցի, թե որքան ուշադիր էր Գ.-ն հետևում պարսիկի աշխատանքին:

-Ես ցանկանում եմ հասկանալ, թե ինչպես է նա անում դա, - ասեց Գ.-ն: Տեսնու՞մ եք նրա ձեռքի հելունը: Ամբողջ գաղտնիքը դրանում է: Ես ուզում եմ գնել դա նրանից, բայց նա չի վաճառում:

Հաջորդ օրը ես սովորականից շուտ եկա: Գ.-ն հատակին նստած գորգ էր նորոգում, այնպես, ինչպես դա պարսիկն էր անում: Նրա շուրջը գույնզգույն բրդյա կարժեր էին թափթփված, իսկ ձեռքին պարսիկի հելունի պես հելուն էր: Պարզվեց, որ Գ.-ն մի հասարակ խարտոցի օգնությամբ

հատել էր էժանագին գրչահատի շեղըրը և առավուովա ընթացքում խորամուխ եղել գորգի նորոգման գաղտնիքի բացահայտմանը:

Նա ինձ շատ էր պատմում գորգերից, որոնք, ինչպես ասում էր, քիչ արվեստի ամենահին ձևերից մեկն էր: Նա խոսում էր Ասիայի որոշ շրջաններում գորգագործության հնադարյան ավադություններից, և թե ինչպես էր մի ամբողջ գյուղ միասին մի գորգի վրա աշխատել, պատմում էր ձմեռային երեկոներից, երբ բոլոր գյուղացիները՝ թե՛ երիտասարդ, թե՛ ծեր, մի մեծ շենքում հավաքվում էին և բաժանվում խմբերի ու հին ժամանակներից եկած հայտնի և սահմանված ավանդույթի համաձայն՝ համապատասխան հերթականությամբ նստում կամ կանգնում էին հատակին: Այնուհետև յուրաքանչյուր խումբ սկսում էր իր աշխատանքը: Ոմանք բրդի միջից հանում էին քարերը և տաշեղները: Մյուսները ճիպոտում էին բուրդը, իսկ երրորդ խումբը սանրում էր այն: Չորրորդը մանում էր, հինգերորդը ներկում այն, վեցերորդը կամ քսան վեցերորդը գործում էր գորգը: Թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք և երեխաները, թե՛ ծերունիները և թե՛ պառավները՝ բոլորն էլ կատարում էին իրենց ավանդական աշխատանքը: Ողջ աշխատանքն ուղեկցվում էր երաժշտությամբ և երգով: Կին մանողները, իլիկները ձեռքներին, հատուկ պար էին պարում աշխատանքի ընթացքում. տարբեր աշխատանքներում ներգրավված մարդկանց շարժումները կարծես միևնույն ռիթմի ներքո մի շարժման էին վերածվում: Դեռ ավելին՝ յուրաքանչյուր տեղայնք ուներ գորգագործության հետ կապված իր ուրույն մեղեդին, իր ուրույն երգերն ու պարերը, որ եկել էին անհիշելի ժամանակներից:

Եվ երբ նա ինձ պատմում էր այս ամենը, մի միտք հղացավ գլխումս. միգուցե գորգի պատկերները և գույները կապված են երաժշտության հետ, դրա արտահայտությունն են՝ ուրվագծերի և գույների միջոցով. միգուցե գորգը այդ երաժշտության գրառման միջոցն է, այն *նոտաները*, որոնցի՛ միջոցով կարելի է մեղեդիներ վերարտադրել: Այս միտքն ինձ տարօրինակ չէր թվում, քանի որ շատ հաճախ ես երաժշտությունը խճճված պատկերների ձևով էի «տեսնում»:

Գ.-ի հետ ունեցած մի քանի պատահական զրույցների միջոցով ես որոշ գաղափար կազմեցի նրա անցյալի վերաբերյալ:

Նա իր մանկությունն անց էր կացրել Փոքր Ասիայի սահմանին անսովոր, մեզնից շատ հեռու, գրեթե բիրլիական պայմաններում: Անհամար ոչխարներ: Տեղից տեղ դեգերումներ: Տարբեր տարօրինակ մարդկանց հետ շփումներ: Նրա երևակայությունը ցնցել էին եզդիները՝ «սատանայապաշտները», ովքեր վաղ տարիքից գրավել էին նրա ուշադրությունն իրենց անհասկանալի ավանդույթներով և անհայտ օրենքներից իրենց տարօրինակ կախվածությամբ: Խոսելով տարբեր բաներից՝ նա նշեց, որ մանկության տարիներին հաճախ էր նկատել, թե ինչպես եզդի տղաները հողի վրա նրանց շուրջը գծած շրջանակից դուրս քայլ չէին կարողանում անել:

Նա իր մանկության տարիներն անց է կացրել հեքիաթների, առասպելների և ավանդույթների մթնոլորտում: «Հրաշալիքը», որով նա

շրջապատված էր, իրական փաստ էր: Ապագայի գուշակությունները, որոնց մասին նա լսում էր և որոնց հավատում էին նրան շրջապատող մարդիկ, իրականանում էին և ստիպում նրան հավատալ շատ այլ բաների:

Այս ամենը միասին վերցրած շատ վաղ տարիքից նրա մոտ հակում էր առաջացրել առ առեղծվածայինը, անըմբռնելին և մոգականը: Նա ինձ պատմեց, որ երբ դեռ շատ երիտասարդ էր, մի շարք ճամփորդություններ էր կատարել դեպի Արևելք: Թե այս պատմություններից որն էր ճիշտ, ես այդպես էլ չկարողացա որոշել: Բայց ինչպես ասեց Գ.-ն, իր ճամփորդությունների ժամանակ նա կրկին հանդիպում է մի շարք երևույթների, որոնք նրան հուշում են որոշ գիտելիքների գոյության մասին, հասարակ մարդու ունակությունները գերազանցող որոշակի ուժերի և հնարավորությունների մասին, ինչպես նաև պայծառատեսության և հրաշագործության հատկանիշներով օժտված մարդկանց մասին: Աստիճանաբար տնից բացակայելով և ճամփորդելով՝ նա սկսում է մեկ հստակ նպատակ հետապնդել. որոնել գիտելիքները և այդ գիտելիքներին տիրապետող մարդկանց: Ինչպես ասեց Գ.-ն, մի շարք բարդություններից հետո նա, հրաշալիքը որոնող մի քանի այլ մարդկանց հետ միասին, գտնում է այս գիտելիքների աղբյուրը:

Այս բոլոր պատմություններում իր մասին կային շատ հակասական և գրեթե անհավատալի փաստեր: Սակայն ես հասկացել էի արդեն, որ նրան չէր կարելի որևէ հասարակ պահանջ ներկայացնել, ոչ էլ հասարակ չափանիշներ կիրառել նրա նկատմամբ: Նրա հետ կապված որևէ բանում վստահ չէիր կարող լինել: Մի օր նա մի բան կասեց, մյուս օրը՝ մեկ այլ քեթիջ բան: Այնուամենայնիվ, նրան երբևիցե չէիր կարող հակասությունների մեջ մեղադրել: Անհրաժեշտ էր ամեն ինչ հասկանալ և մեկը մյուսի հետ կապակցել:

Դպրոցների և այն վայրերի մասին, որտեղ նա գիտելիքներ էր ձեռք բերել, նա միշտ շատ քիչ և մակերեսային էր պատմում: Նա հիշատակում էր Տիբեթի տաճարները, Չիթրալը, Աթոս լեռը, Պարսկաստանի, Բոխատիայի և արևելյան Թուրքեստանի Սուֆի դպրոցները: Նա հիշատակում էր նաև տարբեր դասերի պատկանող դերվիշներին, բայց բոլորի մասին շատ անորոշ կերպով էր խոսում:

Մեր մշատական դարձած խմբի զրույցներից մեկի ժամանակ ես Գ.-ին հարցրեցի. «Եթե հնադարյան գիտելիքները պահպանվել են, և եթե գոյություն ունեն գիտելիքներ, որոնք տարբերվում են և նույնիսկ գերազանցում են մեր գիտությունը և փիլիսոփայությունը, ապա ինչու՞ է այն այդչափ զգուշությամբ թաքցվում, ինչու՞ այն համընդհանուր սեփականություն չի դառնում: Ինչու՞ այն մարդիկ, որ տիրապետում են այս գիտելիքներին, չեն ցանականում տարածել դրանք՝ հանուն խաբեության, չարիքի և սոցիալության դեմ ավելի հզոր և բարեհաջող պայքարի»:

Այս հարցը, իմ կարծիքով, մի հարց է, որ տալիս է յուրաքանչյուր մարդ՝ Էզոթերիզմի գաղափարների հետ ծանոթանալիս:

«Այն ունի երկու պատասխան», - ասեց Գ.-ն: «Առաջին հերթին՝ այդ գիտելիքները քողարկված չեն, և երկրորդը՝ այն չի կարող դառնալ

համընդհանուր սեփականություն: Սկզբում եկեք դիտարկենք այս հայտարարություններից երկրորդը: Այնուհետև, ես ձեզ կապացուցեմ, որ *գիտելիքները* (նա ընդգծեց այս բառը) առավել հասանելի են այն մարդկանց, ովքեր կարող են յուրացնել դրանք: Ամբողջ խնդիրն այն է, որ նրանք կամ չեն ցանկանում, կամ էլ չեն կարողանում ստանալ դրանք:

Սակայն առաջին հերթին պետք է մեկ այլ բան հասկանալ, այն է՝ գիտելիքները չեն կարող բոլորին պատկանել, նույնիսկ չեն կարող պատկանել մեծ քանակությամբ մարդկանց: Այսպիսին է օրենքը: Դուք չեք հասկանում դա, քանի որ չեք հասկանում, որ գիտելիքը, ինչպես ամեն բան այս աշխարհում, նյութական է: Այն նյութական է, և դա նշանակում է, որ նրան հատուկ են նյութականին բնորոշ բոլոր հատկանիշները: Նյութականին բնորոշ առաջին հատկանիշներից մեկն այն է, որ մատերիան միշտ սահմանափակ է, այսինքն՝ մատերիայի ծավալը տվյալ վայրում և տվյալ պայամներում սահմանափակ է: Նույնիսկ անապատի ավազն ու ծովի ջուրը ունեն սահմանված և անփոփոխ քանակություն: Այսպիսով, եթե գիտելիքը նյութական է, ապա այն որոշակի վայրում և որոշակի ժամանակահատվածում ունի որոշակի ծավալ: Կարելի է ասել, որ որոշակի ժամանակահատվածում, օրինակ՝ մեկ դարի ընթացքում, մարդկությունը կուտակել է որոշակի քանակությամբ գիտելիքներ: Բայց մենք գիտենք, նույնիսկ առօրյա կյանքի դիտարկումներից, որ գիտելիքների մատերիան կախված գիտելիքների յուրացման ծավալից, կարող է որակապես տարբեր լինել: Մեծածավալ գիտելիքները որոշակի վայրում, յուրացվելով մեկ մարդու կամ ասենք մարդկանց մի փոքր խմբի կողմից, կարող են շատ լավ արդյունքի հանգեցնել: Փոքրածավալ գիտելիքները յուրացվելով մեծաքանակ մարդկանցից յուրաքանչյուրի կողմից, որևէ արդյունքի չեն հանգեցնում: Դրանք կարող են նույնիսկ սպասումներին հակառակ արդյունքներ ունենալ: Այսպիսով, եթե որոշակի ծավալ ներկայացնող գիտելիքը բաշխվի միլիոնավոր մարդկանց միջև, յուրաքանչյուր անձ շատ քիչ գիտելիք կստանա և գիտելիքների այդ փոքր քանակությունը ոչ իր կյանքում, ոչ էլ նրա կողմից իրերի ընկալման գործում որևէ փոփոխությունն առաջ չեն բերի: Եվ որքան էլ մեծ լինի այն մարդկանց քանակը, ովքեր ստանում են այդ փոքրածավալ գիտելիքները, միևնույն է ոչինչ չի փոխվի նրանց կյանքում, այլ ընդհակառակը դեռ ավելի կբարդացնի այն:

Սակայն, եթե մեծածավալ գիտելիքները կենտրոնացվեն քիչ քանակով մարդկանց մոտ, ապա տվյալ գիտելիքները հիանալի արդյունքների կբերեն: Այս տեսանկյունից առավել շահավետ կլինի պահպանել գիտելիքները փոքր քանակությամբ մարդկանց համար և չտարածել դրանք մասսաների շրջանում:

Եթե որոշակի քանակությամբ ոսկի վերցնենք և որոշենք որոշակի քանակությամբ առարկաներ ոսկեզօծել, ապա անհրաժեշտ է իմանալ կամ հստակ կերպով հաշվարկել, թե ինչ քանակությամբ առարկաներ է հնարավոր ոսկեզօծել այսքան ոսկով: Եթե փորձենք ոսկեզօծել առավել մեծ քանակությամբ առարկաներ, ապա դրանք անհավասար կպատվեն ոսկով,

կրճավորվեն և ավելի վատ տեսք կընդունեն իրենց սկզբնական տեսքի համեմատ: Այս դեպքում մեր ոսկին կկորչի:

Գիտելիքների բաշխման հիմքում ընկած է միևնույն սկզբունքը: Եթե գիտելիքը տրվի բոլորին, ապա այն բոլորին չի հասնի: Եթե այն մի քանիսի մոտ պահպանվի, ապա նա կստանա ոչ միայն այնքան, որքան տրվել է իրեն, այլ նաև կկարողանա խորացնել ստացված գիտելիքները:

Առաջին հայացքից այս տեսությունը շատ անարդար է թվում, քանի որ այն մարդկանց կարգավիճակը, ուժեր, այսպես ասած, հրաժարվել են գիտելիքներից, որպեսզի դրանք ավելի մեծ քանակությամբ ստանան մյուսները, կարծես տխուր է և ծանր: Սակայն իրականում դա այդպես չէ: Եվ գիտելիքների նման բաշխման դեպքում անարդարության որևէ նշույլ չկա:

Փաստը մնում է այն, որ մարդկանց մեծամասնությունը այսպես թե այնպես գիտելիքներ չի ցանկանում ձեռք բերել: Նրանք հրաժարվում են իրենց չափաքանակից և նույնիսկ համընդհանուր բաշխման ժամանակ չեն օգտվում իրենց տրամադրված համամասնությունից, որը տրվում է կենսական նպատակներով: Սա առավել ակնհայտ է դառնում մասսայական խելահեղության ժամանակ, ինչպիսիք են պատերազմները, հեղափոխությունները և այլն, երբ մարդիկ հանկարծ կորցնում են իրենց ողջամտությունը և ամբողջովին վերածվում ավտոմատի՝ տրվելով մասսայական կործանմանը, կորցնելով անգամ ինքնապահպանման բնագործ: Այս ամենի հետևանքով հսկայական գիտելիքներ են մնում բարձրթողի վիճակում և կարող են բաշխվել նրանց միջև, ուժեր գիտակցում են դրանց արժեքը:

Դրանում որևէ անարդար բան չկա, քանի որ գիտելիքներ ստացող մարդիկ չեն վերցնում այն, ինչ ուրիշներին է պատկանում և ուրիշներին որևէ բանից չեն զրկում: Նրանք վերցնում են միայն այն, ինչից ուրիշները հրաժարվել են ասես անօգուտ մի բանից. այն ամեն դեպքում կորչելու էր:

Ումանք կարող են գիտելիքներ կուտակել, եթե մյուսները հրաժարվեն դրանցից:

Մարդկության կյանքում կան ժամանակահատվածներ, որոնք սովորաբար համընկնում են մշակույթների և քաղաքակրթությունների անկման հետ, երբ մասսաներն անվերադարձորեն կորցնում են իրենց բանականությունը և սկսում են ոչնչացնել դարերի և հազարամյակների ընթացքում մշակույթների կողմից կերտված ամեն ինչ: Նման խելահեղությունների ժամանակաշրջանները, որոնք հաճախ զուգադիպում են երկրաբանական կատակլիզմների, կլիմայական փոփոխությունների և այլ նման մոլորակային բնույթ ունեցող երևույթների հետ, մեծ քանակությամբ գիտելիքներ են արձակում: Սա իր հերթին գիտելիքները հավաքագրելու անհրաժեշտություն է առաջացնում, ինչը հակառակ դեպքում կարող է կորստի մատնվել: Այսպիսով, ցիրուցան եղած գիտելիքների հավաքագրման աշխատանքը հաճախ զուգատիպում է մշակույթների և քաղաքակրթությունների անկման սկզբնական շրջանի հետ:

Հարցն այս տեսանկյունից պարզ է: Ամբոխը ոչ ցանկանում է, ոչ էլ պատրաստ է գիտելիքներ ձեռք բերել, և ամբոխի առաջնորդները, իրենց

շահից ելնելով, փորձում են ցանկացած նորի և անհայտի հանդեպ ուժգնացնել նրանց սարսափը և խորշումը: Ստրկությունը, որում ապրում է մարդկությունը, հիմնված է նման սարսափի վրա: Նույնիսկ դժվար է պատկերացնել այս ստրկության ողջ սարսափը: Մենք չենք հասկանում, թե *ինչ* են կորցնում մարդիկ: Սակայն այս ստրկության պատճառը հասկանալու համար բավական է տեսնել, թե ինչպես են ապրում մարդիկ, թե որն է իրենց գոյության նպատակը, նրանց ցանկությունների, կրքերի և մղումների առարկան, նրանց մտածելակերպը, խոսակցությունները, թե նրանք ինչին են ծառայում և ինչ են պաշտում: Ապա տես, թե մեր ժամանակների բարեկիրթ մարդկությունը ինչի վրա է գումարներ ծախսում՝ հաշվի չառնելով պատերազմները: Տե՛ս, թե ինչով է պայմանավորված ամենաբարձր գինը, որտեղ են ամենամեծ քանակությամբ ամբոխները: Եթե մի պահ դիտարկենք այս հարցադրումները, ապա պարզ կդառնա, որ ներկայիս մարդկությունն, իր հետաքրքրություններով հանդերձ, ավելին չի կարող ակնկալել: Ինչպես արդեն ասեցի, այլ կերպ չի էլ կարող լինել: Պատկերացրեք, որ ողջ մարդկությանը տարեկան կես ֆունտ գիտելիք է հատկացվում: Եթե այդ գիտելիքը բաշխվի յուրաքանչյուրի միջև, ապա նրանցից յուրաքանչյուրն այնքան քիչ գիտելիք կստանա, որ նախկինի պես միևնույն հիմարը կմնա: Բայց շնորհիվ այն փաստի, որ շատ քչերն են ցանկանում ձեռք բերել այդ գիտելիքները, նրանք ովքեր վերցնում են այդ գիտելիքները, կարողանում են վերցնել, ասենք, յուրաքանչյուրը մեկ հատիկ՝ այսպիսով ստանալով նաև ավելի խելացի դառնալու հնարավորությունը: Բոլորը խելացի չեն կարող դառնալ, նույնիսկ, եթե ցանկանան: Եվ, եթե հաջողվի դառնալ խելացի դա հարցին լուծում չի տա: Գոյություն ունի հավասարակշռություն, որը չի կարող խախտվել:

Սա մի ասպեկտ է: Հարցի մյուս կողմն այն է, որ, ինչպես արդեն ասեցի, ոչ ոք ոչինչ չի թաքցնում: Որևէ առեղծված չկա: Սակայն իրական գիտելիքների ձեռքբերումը և փոխանցումը հսկայական աշխատանք է պահանջում, մեծ ջանքեր և՛ նրանց կողմից, ովքեր ստանում են այդ գիտելիքները, և՛ նրանց կողմից, ովքեր տալիս են դրանք: Եվ նրանք, ովքեր տիրապետում են այդ գիտելիքներին, անում են ամեն ինչ գիտելիքները հնարավորինս մեծ քանակությամբ մարդկանց հաղորդելու և մարդկանց մոտեցումը ձևավորելու, ինչպես նաև ճշմարտության ընկալման գործում նրանց նախապատրաստելու համար: Սակայն գիտելիքները հնարավոր չէ ուժով որևէ մեկին հաղորդել. ինչպես արդեն ասեցի, եթե անկողմնակալ կերպով ուսումնասիրենք մարդու կյանքը, թե ինչով է լցված նրա առօրյան, և թե ինչով է նա հետաքրքրված, ապա այս ամենը անմիջապես պարզ ցույց կտա արդյոք կարելի է մեղադրել գիտելիքների տեր մարդկանց գիտելիքները թաքցնելու հարցում:

Նա, ով բաղձում է գիտելիքներ ձեռք բերել, պետք է ինքնուրույն սկզբնական ջանքերը գործադրի գիտելիքների աղբյուրը բացահայտելու և դրան մոտենալու համար՝ օգտվելով այն օգնությունից և ցուցումներից, որոնք տրվում են բոլորին, ինչը մարդիկ, որպես կանոն, չեն ցանկանում նկատել: Մարդիկ չեն կարող գիտելիքներ ստանալ առանց որևէ ջանք

գործադրելու: Նրանք դա շատ լավ գիտակցում են սովորական գիտելիքների դեպքում, սակայն *խորը գիտելիքների* դեպքում՝ ընդունելով դրա գոյությունը, նրանք սկսում են մեկ այլ բան ակնկալել: Օրինակ՝ բոլորը շատ լավ գիտեն, որ եթե որևէ մեկը ցանկանում է չինարեն սովորել, ապա դրա համար կպահանջվի մի քանի տարիների տքնաջան աշխատանք: Բոլորը գիտեն, որ բժշկության սկզբունքները յուրացնելու համար անհրաժեշտ է հինգ տարի, և միգուցե երկու անգամ ավել՝ նկարչության և երաժշտության ուսումնասիրության համար: Մինչդեռ կան տեսություններ, որոնք պնդում են, թե գիտելիքն ինքն է գալիս մարդկանց մոտ, և նրանց կողմից որևէ ջանք գործադրելու կարիք չկա, որ հնարավոր է դրանք ձեռք բերել նույնիսկ քնի մեջ: Նման տեսությունների գոյությունը լրացուցիչ կերպով գալիս է բացատրելու այն, թե ինչու գիտելիքն ինքը չի կարող գալ մարդկանց մոտ:

Միևնույն ժամանակ կարևոր է գիտակցել, որ այս ուղղությամբ ներդրած մարդու ինքնուրույն ջանքերը որևէ բան ձեռք բերելու նպատակով նույնպես որևէ արդյունք չեն կարող ունենալ: Մարդը կարող է գիտելիքներ *ձեռք բերել* միայն այն մարդկանց օգնությամբ, ովքեր տիրապետում են այդ գիտելիքներին: Սա ի սկզբանե պետք է հասկանալ: *Պետք է սովորել նրանից ով գիտի»:*

Հետագա խմբակային հանդիպումներից մեկի ժամանակ Գ.-ն, պատասխանելով հարցին, շարունակեց վերամարմնավորման և ետմահու կյանքի վերաբերյալ իր միտքը, որին արդեն անդրադարձել էր:

- Կարելի է ասել, որ մարդն անմահ է:

-Անմահությունը այն հատկություններից է, որ մենք վերագրում ենք մարդկանց՝ չհասկանալով դրա իմաստը,- ասեց Գ.-ն: Նմանատիպ հատկություններից է «անհատականությունը» (ներքին միասնությունը), «մշտական և անփոփոխ ես-ը», «գիտակցությունը» և «կամքը»: Բոլոր այս հատկությունները *կարող են* բնորոշ լինել մարդուն (նա ընդգծեց «կարող են» բառը), բայց դա չի նշանակում, որ նա տիրապետում է դրանց կամ, որ դրանք բնորոշ են յուրաքանչյուրին:

Հասկանալու համար, թե մարդն ինչ է իրենից ներկայացնում ներկայիս պահին, այսինքն՝ զարգացման ներկայիս փուլում, անհրաժեշտ է պատկերացնել, թե նա ինչ կարող է դառնալ, այսինքն՝ ինչ է կարող ձեռք բերել: Միայն զարգացման ճշգրիտ հաջորդականությունը հասկանալու դեպքում մարդիկ կդադարեն վերագրել ինքներն իրենց այն, ինչ նրանք իրականում ձեռք չեն բերել դեռևս և միգուցե կկարողանան ձեռք բերել այն մեծ ջանքեր գործադրելու և հսկայական աշխատանք տանելու դեպքում:

Համաձայն հնագույն ուսմունքի, որի հետքերը կարելի է գտնել մի շարք համակարգերում, թե՛ նոր և թե՛ հին, այն մարդը՝ բառիս բուն իմաստով մարդը, որ անցել է մարդու համար հնարավոր զարգացման բոլոր փուլերը, բաղկացած է *չորս մարմիններից*: Այս չորս մարմինները բաղկացած են չորս սուբստանցիաներից, որոնք, աստիճանաբար գնալով, նրբանում և փոխներթափանցում են իրար մեջ՝ կազմելով չորս ինքնուրույն մարմին,

որոնք որոշակի հարաբերության մեջ են միմյանց հետ, բայց նաև կարող են իրարից անկախ գործել:

Պատճառը, որ հնարավոր է դարձնում այս չորս մարմինների գոյությունն այն է, որ մարդկային օրգանիզմը, այսինքն՝ ֆիզիկական մարմինը, այնպիսի բարդ կազմվածք ունի, որ որոշ պայմաններում մի նոր ինքնուրույն օրգանիզմ կարող է առաջանալ նրանում, որն, ի տարբերություն ֆիզիկական մարմնի, առավել պատշաճ և զգայուն գործիք կարող է հանդիսանալ գիտակցության գործունեության համար: Այս նոր մարմնում ձևավորված գիտակցությունը կարող է կառավարել այն՝ ամբողջական վերահսկողություն և իշխանություն հաստատելով ֆիզիկական մարմնի նկատմամբ: Այս երկրորդ մարմնում որոշակի պայմանների դեպքում կարող է երրորդ մարմինն առաջանալ, որն ունի իր ուրույն առանձնահատկությունները: Երրորդ մարմնում ձևավորված գիտակցությունը առաջին երկու մարմինների վրա ամբողջական վերահսկողություն է իրականացնում: Երրորդ մարմինը հնարավորություն ունի այնպիսի գիտելիքներ ձեռք բերել, որ հասանելի չէ ո՛չ առաջինին, ո՛չ էլ երկրորդին: Որոշ պայմաններում երրորդ մարմնում կարող է չորրորդ մարմինը ձևավորվել, որն երրորդից այնքանով է տարբերվում, որքանով երրորդը՝ երկրորդից և երկրորդն՝ առաջինից: Չորրորդ մարմնում ձևավորված գիտակցությունը լիովին վերահսկում է ինչպես առաջին երեք մարմինները, այնպես էլ ինքն իրեն: Այս չորս մարմինները տարբեր ուսմունքներում տարբեր սահմանումներ են ստացել: Գ.-ն մի սխեմա գծեց, որ ներկայացված է պատկեր 1-ում, և ասեց.

-Առաջինը ֆիզիկականն է մարմինն է, քրիստոնյա տերմինաբանության մեջ «աշխարհիկ» մարմինն է, երկրորդը՝ «բնական» մարմինն է, երրորդը՝ «հոգևոր», իսկ չորրորդը՝ *էզոթերիկ Քրիստոնեության* մեջ՝ «աստվածային» մարմինն է: Թեոսոֆիայի տերմինաբանության մեջ առաջինը կոչվում է «ֆիզիկական» մարմին, երկրորդը՝ «աստեղային», երրորդը՝ «մտավոր», չորրորդը՝ «պատճառական» մարմին:¹

Արևելյան որոշ ուսմունքների տերմինաբանության համաձայն՝ առաջին մարմինը «ձի»-ն է (զգացմունքները, իդեերը), երկրորդը՝ «կառապանը» (բանականություն) և չորրորդը՝ «տերը» (Եսը, գիտակցությունը, կամքը):

I մարմին
մարմին

II մարմին

III մարմին

IV

¹ Այս մարմինն իր գործողությունների *պատճառներն* իր ներսում է կրում, անկախ է արտաքին պատճառներից և *կամքի մարմնավորումն* է:

Աշխարհիկ մարմին	Բնական մարմին	Հոգևոր մարմին	Աստվածային մարմին
«Կառք» (մարմին)	«Ձի» (զգացմունքներ, ցանկություններ)	«Կառապան» (բանականու թյուն)	«Տեր» (Ես, գիտակցություն, կամք)
Ֆիզիկական մարմին	Աստեղային մարմին	Մտավոր մարմին	Պատճառական մարմին

Պատկեր 1

Նման համեմատություններ և զուգահեռներ կարելի է գտնել համակարգերի և ուսմունքների մեծամասնության մոտ, որոնք ընդունում են, որ մարդը, բացի ֆիզիկական մարմնից, ունի ավելին: Բայց գրեթե բոլոր այդ ուսմունքները, կրկնելով հնագույն ուսմունքները և բաժանումները, որոնք քիչ թե շատ իրար նման են, մոռացել են կամ բաց են թողել ամենակարևոր առանձնահատկությունը. այն է՝ մարդու ավելի կատարյալ մարմինները բնածին չեն, և դրանք կարելի է միայն արհեստական ճանապարհով զարգացնել՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ, թե ներքին, և թե արտաքին: «Աստեղային» մարմինը մարդու համար պարտադիր պայման չէ: Դա մեծ շքեղություն է, որ շատ քչերը կարող են իրենց թույլ տալ ունենալ: Մարդիկ շատ հանգիստ կարող են ապրել առանց «աստեղային» մարմնի: Մարդու ֆիզիկական մարմինն ունի կենսական անհրաժեշտության բոլոր գործառնությունները: Մարդը, որ չունի «աստեղային» մարմին, կարող է մտավոր ունակություններով օժտված լինել և *հոգևոր մարդու* սուպավորություն գործել՝ խաբելով ոչ միայն ուրիշներին, այլ նաև ինքն իրեն:

Նույնը և դեռ ավելին կարելի է ասել «մտավոր մարմնի» և չորրորդ մարմնի մասին: Հասարակ մարդը չունի այս մարմինները կամ դրանց համապատասխան գործառնությունները: Մակայն նա հաճախ կարծում է և ստիպում է մյուսներին կարծել, որ նա այն ունի: Տվյալ պատճառների թվում կարելի է նշել այն փաստը, որ առաջին հերթին՝ ֆիզիկական մարմինը գործում է հենց այն սուբստանցիայի օգնությամբ, որից բաղկացած են գերագույն մամինները, բացառությամբ այն բանի, որ այս սուբստանցիան դեռևս բյուրեղացած չէ և չի պատկանում նրանց: Երկրորդը՝ նրա բոլոր գործառնությունները նման են գերագույն մարմինների գործառնություններին, սակայն, այնուամենայնիվ, նրանց միջև կան նաև զգալի տարբերություններ: Միայն ֆիզիկական մարմին ունեցող մարդու գործառնությունների և *չորս մարմին* ունեցող մարդու գործառնությունների միջև եղած հիմնական տարբերությունն այն է, որ առաջին դեպքում *ֆիզիկական մարմնի* գործառնությունները ղեկավարում են մյուս բոլոր գործառնությունները. այլ կերպ ասած՝ ամեն բան ղեկավարում է մարմինը, որն իր հերթին ղեկավարվում է

արտաքին ազդեցությունների կողմից: Երկրորդ դեպքում՝ հրամանը կամ վերահսկողությունը բխում է գերագույն մարմիններից:

Ֆիզիկական մարմնի և չորս մարմինների գործառնությունների միջև կարելի է զուգահեռներ անցկացնել:

Գ.-ն գծեց ևս մեկ գծապատկեր (պատկեր 2)՝ զուգահեռներ անցկացնելով մեկ ֆիզիկական մարմին ունեցող և չորս մարմին ունեցող մարդու գործառնությունների միջև:

<p>Արտաքին ազդեցությունների ներքո գործող ավտոմատ (մեքենա):</p>	<p>Ավտոմատի ցանկությունները:</p>	<p>Ցանկություններից բխող մտքերը:</p>	<p>Ցանկություններով պայմանավորված տարաբնույթ և հակասական և «կամայական» գործողությունները:</p>
--	----------------------------------	--------------------------------------	---

<p>Մարմին, որ հնազանդվում է բանականությանը ենթակա ցանկություններին և զգացմունքներին:</p>	<p>Զգացմունքային մղումներ և ցանկություններ, որոնք ենթարկվում են մտքին և բանականությանը:</p>	<p>Գիտակցությանն ու կամքին ենթակա մտածողության գործառնություններ:</p>	<p>Ես Էգո Գիտակցություն Կամք</p>
--	---	---	--

Պատկեր 2

-Առաջին դեպքում,-ասեց Գ.-ն, - այսինքն՝ միայն ֆիզիկական մարմին ունեցող մարդու գործառնությունների դեպքում, ավտոմատը կախվածության մեջ է գտնվում արտաքին ազդեցություններից, և մյուս երեք գործառնությունները կախված են ֆիզիկական մարմնից և իր վրա կրած արտաքին ազդեցություններից: Ցանկությունը կամ խորշումը՝ «ես ուզում եմ», «ես չեմ ուզում», «ինձ դուր է գալիս», «ինձ դուր չի գալիս», այսինքն՝ երկրորդ մարմնի տեղը գրավող գործառնությունները, կախված են պատահական ցնցումներից և ազդեցություններից: Մտածողությունը, որ համապատասխանում է երրորդ մարմնի գործառնություններին, լիովին մեխանիկական գործընթաց է: «Կամքը» հասարակ մեքենայացված մարդու մոտ բացակայում է. նրա մոտ առկա են միայն ցանկությունները: Ցանկությունների և իդձերի երկարատև կամ կարճատև կայունությունը կոչվում է ուժեղ կամ թույլ կամք:

Երկրորդ դեպքում, այսինքն՝ չորս մամինների գործառնությունների դեպքում, ֆիզիկական մարմնի ավտոմատացումը կախված է մյուս մարմինների ազդեցությունից: Տարբեր ցանկությունների աններդաշնակ և հաճախ հակասական գործունեության փոխարեն, առկա է *մեկ և միակ Ես-ը*, որն ամբողջական է, անտրոհելի և կայուն: Կա *անհատականություն*, որն իշխում է ֆիզիկական մարմնին և նրա ցանկություններին՝ հաղթահարելով վերջինիս դժկամությունը և ընդվզումները: Մեխանիկական մտածողության գործընթացի փոխարեն առկա է *գիտակցություն*: Առկա է *կամք*, այսինքն՝ մի ուժ, որ բաղկացած չէ տարբեր «Ես»-երին պատկանող տարաբնույթ և հաճախ հակասական ցանկություններից, այլ մի կամք, որը բխում է գիտակցությունից և առաջնորդվում անհատականությամբ, եզակի և կայուն Ես-ով: Միայն նման կամքը կարող է «ազատ» կոչվել, քանզի այն պատահականություններից կախում չունի և չի կարող փոփոխվել կամ ուղղորդվել արտաքին գործոնների կողմից:

Մի արևելյան ուսմունք չորս մարմինների գործառնությունները, դրանց աստիճանական աճը և աճի համար ստեղծված պայմանները նկարագրում է հետևյալ կերպ.

պատկերացնենք մի անոթ կամ թորանոթ, որ պարունակում է բազմազան մետաղյա փոշիներ: Փոշիները որևէ կերպ կապված չեն միմյանց հետ, և ցանկացած պատահական փոփոխություն, կախված թորանոթի դիրքից, փոխում է փոշիների հարաբերական դիրքը: Եթե թափահարենք թորանոթը կամ մատով թփթփացնենք այն, ապա վերևի մասում գտնվող փոշին կարող է տեղաշարժվել ներքևի կամ մեջտեղի մաս, մինչդեռ թորանոթի հատակում գտնվող փոշին կարող է հայտնվել վերևի մասում: Փոշիների իրավիճակը կայուն չէ, և նման պայմաններում որևէ բան կայուն չի կարող լինել: Սա ճիշտ մեր հոգեկան աշխարհի պատկերն է: Յուրաքանչյուր հաջորդող պահ կամ նոր ազդեցություններ կարող են փոխել փոշու դիրքը՝ վերևի մասում գտնող փոշուն իջեցնելով ներքև և դրան փոխարինելով բացարձակապես մեկ ուրիշով: Գիտությունը փոշիների նման վիճակը կոչում է մեխանիկական խառնուրդի վիճակ: Նման խառնուրդում փոշիների փոխհարաբերությունը էապես բնորոշող գիծը այդ փոխհարաբերությունների անկայունությունն է և փոփոխականությունը:

Անհնար է կայունացնել փոշիների փոխհարաբերությունները մեխանիկական խառնուրդի վիճակում: Սակայն հնարավոր է միաձուլել դրանք. փոշիների բնույթը տալիս է այդ հնարավորությունը: Դրա համար անհրաժեշտ է հատուկ կրակ, որ կվառվի թորանոթի տակ. տաքացնելով և հալեցնելով փոշին՝ կրակը վերջապես կմիաձուլի փոշիները: Միաձուլվելով այսկերպ՝ փոշիները կվերածվեն քիմիական բաղադրության: Այժմ նրանք չեն կարող անջատվել այն հասարակ մեթոդներով, որ բաժանում էին նրանց և ստիպում փոխել իրենց տեղը, երբ նրանք գտնվում էին մեխանիկական խառնուրդի կարգավիճակում: Թորանոթի բովանդակությունը դառնում է միատարր, «անհատական»: Սա երկրորդ մարմնի ձևավորման պատկերավոր օրինակն է: Կրակը, որի օգնությամբ իրականացվում է ձուլումը, առաջանում է «շփումից», ինչ մարդու մոտ առաջանում է «այո»-ի

և «ոչ»-ի միջև պայքարի միջոցով: Եթե մարդն ընդառաջ է գնում բոլոր իր ցանկություններին կամ խրախուսում է դրանք, նրանում որևէ ներքին պայքար չի ընթանում, որևէ «շփում», որևէ կրակ չի բոցավառվում: Սակայն, եթե որոշակի նպատակների հասնելու համար մարդը պայքարում է իրեն խոչընդոտող ցանկությունների դեմ, ապա արդյունքում բոց է վառում, որն աստիճանաբար վերափոխում է նրա ներքին աշխարհը՝ դարձնելով այն մեկ ամբողջություն:

Եկեք վերադառնանք մեր օրինակին: Չուլման միջոցով ձեռքբերված բաղադրությունը ունի որոշակի հատկություններ, որոշակի առանձնահատուկ ձգողականություն, որոշակի էլեկտրահաղորդականություն և այլն: Այս հատկությունները տվյալ սուբստանցիայի բնորոշ գծերն են: Բայց որոշակի աշխատանք տանելուց հետո, այս հատկությունների թիվը կարելի է մեծացնել՝ այսինքն՝ ձուլվածքը կարող է նոր հատկություններ ձեռք բերել, որոնք նախապես բացակայում էին նրանում: Այն կարելի է մագնիսացնել, ռադիոակտիվացնել և այլն:

Չուլվածքին նոր հատկություններ հաղորդելու գործընթացը համապատասխանում է երրորդ մարմնի ձևավորման գործընթացին և երրորդ մարմնի միջոցով նոր գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը:

Երբ ձևավորվում է երրորդ մարմինը և ձեռք է բերում բոլոր հնարավոր հատկությունները, ունակությունները և գիտելիքները, մնում է դրանց ամրապնդման խնդիրը, քանի որ, ձեռք բերելով դրանք որոշակի ազդեցությունների միջոցով, կարելի է կորցնել դրանք հենց նույն կամ ուրիշ ազդեցությունների հետևանքով: Բոլոր երեք մարմինների վրա հատուկ աշխատանք կատարելու միջոցով՝ ձեռքբերված հատկությունները կարող են դառնալ երրորդ մարմնի մշտական և անբաժան սեփականությունը:

Այս ձեռքբերված բնորոշ գծերի ամրապնդման գործընթացը համապատասխանում է չորրորդ մարմնի ձևավորման գործընթացին:

Եվ միայն այն մարդուն է կարելի անվանել «մարդ», բառիս բուն իմաստով, ով լիարժեք կերպով զարգացրել է իր չորս մարմինները: Այս մարդն օժտված է շատ այնպիսի հատկանիշներով, որոնք բացակայում են սովորական մարդու մոտ: *Այդ հատկանիշներից մեկն անմահությունն է:* Բոլոր կրոնները և հնագույն ուսմունքներն այն կարծիքի են, որ ստանալով չորրորդ մարմինը՝ մարդը ձեռք է բերում անմահություն: Նրանք առաջարկում են ուղիներ, որոնց միջոցով կարելի է ձեռք բերել չորրորդ մարմինը, այսինքն՝ անմահությունը: Այս կապակցությամբ որոշ ուսմունքներ համեմատում են մարդուն մի տան հետ, որն ունի չորս սենյակ: Մարդն ապրում է մի սենյակում՝ ամենափոքր և ամենախղճուկ: Եվ նա նույնիսկ չի կասկածի, որ գոյություն ունեն գանձերով լի սենյակներ, մինչև նրան չտեղեկացնեն այդ մասին: Դա բացահայտելով՝ նա սկսում է փնտրել այդ սենյակների բանալիները, հատկապես չորրորդին՝ ամենակարևոր սենյակին: Երբ մարդը հայտնվում է այս սենյակում, ապա դառնում է իր տան տերն ու տիրակալը, որովհետև միայն այդ դեպքում է տունն ամբողջովին և ընդամիշտ նրա տիրապետության տակ անցնում:

Չորրորդ սենյակը մարդուն անմահություն է պարզում, և բոլոր կրոնական ուսմունքները ձգտում են ցույց տալ անմահության ուղին: Կան բազմաթիվ ուղիներ, մի քանիսը ավելի կարճ, մյուսներն՝ ավելի երկար, մի քանիսն՝ ավելի բարդ, մյուսներն էլ՝ ավելի դյուրին: Սակայն բոլորն էլ առանց բացառության ուղղորդում են կամ ձգտում են ուղղորդել դեպի անմահություն:

Հաջորդ հանդիպմանը Գ.-ն սկսեց այն տեղից, որտեղ կանգ էր առել նախորդ հանդիպմանը ժամանակ:

-Անցյալ անգամ ես ասեցի, որ անմահությունը մարդու բնածին առանձնահատկություններից չէ: Սակայն մարդը կարող է ձեռք բերել անմահություն: Գոյություն ունեցող և ընդհանուր առմամբ հայտնի ուղիները, որ տանում են դեպի անմահություն, կարելի է բաժանել երեք դասի՝

1. Ֆաքիրների ուղի
2. Վանականների ուղի
3. Յոգերի ուղի

Ֆաքիրների ուղին ֆիզիկական մարմնի հետ պայքարի ուղին է՝ առաջին սենյակի վրա տարվող աշխատանքը: Այն երկար, խրթին և անհայտ ուղի է: Ֆաքիրը ձգտում է ֆիզիկական կամք ձևավորել և իշխանություն հաստատել մարմնի վրա: Սա իրականացվում է սարսափելի տանջանքների, մարմինը կտտանքների ենթարկելու միջոցով: Ֆաքիրի ուղին բաղկացած է չափազանց բարդ բազմաթիվ ֆիզիկական վարժություններից: Ֆաքիրը ժամերով, օրերով, ամիսներով, տարիներով անշարժ կանգնում է միևնույն դիրքով կամ մերկ քարի վրա ձեռքերը պարզած նստում է արևի, անձրևի և ձյան տակ, կամ ինքն իրեն խոշտանգում է կրակով, ոտքերը դնում մրջնաբույնի մեջ և այլն: Եթե նա չի հիվանդանում և մահանում մինչ իր մեջ ֆիզիկական կամք ձևավորելը, ապա ձեռք է բերում չորրորդ սենյակը կամ չորրորդ մարմնի ձևավորման հնարավորությունը: Սակայն նրա մյուս գործառնությունները՝ էմոցիոնալ և ինտելեկտուալ, չեն զարգանում: Նա ձևավորում է կամք, սակայն որևէ տեղ չի կարող կիրառել այն. նա չի կարող օգտագործել կամքը՝ գիտելիքներ ձեռք բերելու կամ ինքնապաշտպանության համար: Որպես կանոն նա շատ ծեր է՝ որևէ նոր աշխատանք սկսելու համար: Սակայն այնտեղ, որտեղ կան ֆաքիրների դպրոցներ, կարելի է գտնել նաև յոգերի դպրոցներ: Յոգերը սովորաբար աչքի տակ են պահում ֆաքիրներին: Եթե ֆաքիրը ձեռք է բերում այն ինչին ձգտում է մինչ շատ ծերանալը, նրանք ընդունում են ֆաքիրին յոգերի դպրոց, որտեղ նրան սկզբում ապաքինում են, վերականգնում շարժող ուժը, որից հետո սկսում են ուսուցանել նրան: Սակայն այժմ նա ունի կամք, որն օգնել է նրան իր ճանապարհին հաղթահարելու անհավատալի դժվարություններ. այս կամքը կարող է օգնել նրան լուծելու ճանապարհի երկրորդ հատվածում ընկած խնդիրները՝ կապված մտավոր և էմոցիոնալ գործառնությունների զարգացման հետ:

Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչպիսի փորձությունների միջով են անցնում ֆաքիրները: Ես չգիտեմ տեսել էք արդյոք իսկական ֆաքիրների, թե՛ ոչ: Ես շատերին եմ տեսել: Օրինակ՝ մեկին հանդիպել եմ Հնդկաստանի տաճարներից մեկի սրահում և նույնիսկ նրա կողքին քնել: Ջօր ու գիշեր քսան տարիների ընթացքում նա իր ձեռքի մատների և ոտքի թաթերի վրա էր կանգնած մնացել ու այլևս չէր կարողանում ուղղվել: Նրան իր աշակերտները մի տեղից մյուսն էին տեղափոխում և կարծես մի անշուշտ առարկայի լողացնում գետում: Այս ամենը միանգամից չի ձեռքբերվում: Միայն պատկերացրեք, թե ինչպիսի դժվարություններ նա պիտի հաղթահարի, ինչպիսի չարչարաքների միջով պիտի անցնի այդ կարգավիճակին հասնելու համար:

Իսկ մարդը որոշում է ֆաքիր դառնալ ոչ թե այն պատճառով, որ գիտակցում է բոլոր այն հնարավորությունները և արդյունքները, որ ընձեռում է այս ուղին, ոչ էլ դա անում է կրոնական համոզմունքներից ելնելով: Բոլոր այն արևելյան երկրներում, որտեղ գոյություն ունեն ֆաքիրներ, հասարակ ժողովրդի մոտ կա մի սովորույթ, որի համաձայն որևէ ուրախալի միջադեպից հետո նրանք երդում են տալիս նորածին երեխային հանձնել ֆաքիրներին: Բացի այդ, ֆաքիրները հաճախ որդեգրում են որբերին կամ աղքատ ընտանիքներից գնում են երեխաներին: Այս երեխաները դառնում են նրանց աշակերտները և ինքնակամ կամ կամ ստիպողաբար են ընդօրինակում նրանց. ոմանք միայն ձևական, մյուսները, իսկական ֆաքիրներ են դառնում հետագայում:

Պատահում է նաև, երբ ոմանք որոշում են իսկական ֆաքիր դառնալ միայն այն պատճառով, որ նրանց վրա ազդեցիկ տպավորություն է գործել որևէ ֆաքիր: Տաճարներում յուրաքանչյուր ֆաքիրի շուրջ կարելի է տեսնել մարդկանց, ովքեր ընդօրինակում են նրանց՝ նստած կամ կանգնած մնալով միևնույն դիրքում: Դա շատ երկար չի տևում, սակայն երբեմն՝ մի քանի ժամ: Երբեմն պատահում է նույնիսկ, որ տոնակատարության ժամանակ պատահամամբ հայտնվելով տաճարում՝ ինչ-որ մեկը փորձում է կրկնօրինակել իրեն ապշեցրած ֆաքիրին ու այլևս տուն չի վերադառնում, այլ միանում է ֆաքիրի հետևորդներին, և ժամանակի ընթացքում ինքն էլ է դառնում ֆաքիր: Անհրաժեշտ է հասկանալ, որ ես «ֆաքիր» բառը չակերտավոր իմաստով եմ գործածում: Պարսկաստանում *ֆաքիր* պարզապես նշանակում է մուրացկան: Իսկ Հնդկաստանում մեծաքանակ ձեռնածուներ կան, որոնց նույնպես իրենց կոչում են *ֆաքիր*: Եվրոպացիները՝ հատկապես տեղի գիտնականները, շատ հաճախ ֆաքիր են անվանում յոզերին, ինչպես նաև թափառական հոգևորական տարբեր դասերին պատկանող *վանականներին*:

Սակայն իրականում ֆաքիրի, վանականի և յոզի ուղիները բացարձակապես տարբեր են: Մինչ այժմ ես խոսում էի ֆաքիրներից: Նրանց ուղին ուղիներից առաջինն է:

Երկրորդ ուղին վանականի ուղին է: Սա հավատքի, կրոնական զգացմունքների և կրոնական գոհաբերությունների ուղին է: Միայն կրոնական շատ ուժեղ էմոցիաներ և նույնքան ուժեղ կրոնական

երևակայություն ունեցող մարդը կարող է բառի բուն իմաստով «վանական» դառնալ: Վանականի ուղին նույնպես բավականին դժվար է: Վանականը տասնյակ տարիներ է անցկացնում՝ պայքարելով ինքն իր հետ. սակայն ողջ աշխատանքը կենտրոնացված է երկրորդ սենյակի վրա՝ երկրորդ մարմնի, այսինքն՝ *զգացմունքների*: Ենթարկելով իր բոլոր զգացմունքները մեկ զգացմունքին՝ հավատքին՝ նա իր մեջ միասնություն է ձևավորում, այլ զգացմունքներին վերահսկող կամք և այսկերպ մուտք է գործում չորրորդ սենյակ: Սակայն նրա ֆիզիկական մարմինը և մտածելու ունակությունները թերի են մնում: Որպեսզի նա կարողանա օգտագործել իր ձեռքբերումները, պետք է կատարելագործի իր մարմինը և մտածելու կարողությունները: Դա կարելի է ձեռք բերել նոր գոհաբերությունների և *զրկանքների* միջոցով: *Վանականը պետք է դառնա յոզ և ֆաքիր*: Շատ քչերն են այդքան հեռուն գնում: Եվ շատ ավելի քչերն են հաղթահարում բոլոր դժվարությունները: Նրանց մեծ մասը կամ մինչ այդ մահանում է, կամ էլ վանական է դառնում միայն արտաքուստ:

Երրորդ ուղին յոզի ուղին է: Սա գիտելիքների և բանականության ուղին է: Յոզի ուղին բաղկացած է երրորդ սենյակի վրա աշխատանք կատարելուց և գիտելիքների օգնությամբ չորրորդ սենյակ մտնելու ձգտումներից: Յոզը չորրորդ սենյակ է հասնում՝ կատարելագործելով իր միտքը, սակայն նրա մարմինը և զգացմունքները թերզարգացած են մնում. ինչպես ֆաքիրը և վանականը՝ նա չի կարողանում կիրառության մեջ դնել իր ձեռքբերած արդյունքները: Նա ամեն ինչ գիտի, բայց ոչինչ չի կարող անել: Որպեսզի նա որևէ բան կարողանա անել, նա պետք է կարողանա իր ձեռքն առնել իր մարմինն ու զգացմունքները, այսինքն՝ առաջին և երկրորդ սենյակները: Իսկ դրան հասնելու և արդյունքեր ստանալու համար նա կրկին պետք է քրտնաջան աշխատանք տանի: Այս դեպքում նա ունի առավելություն, քանի որ գիտակցում է իր կարգավիճակը և հասկանում է, թե ինչի կարիք ունի, ինչ պետք է անի և որ ուղղությամբ շարժվի: Բայց ինչպես ֆաքիրի կամ վանականի դեպքում, յոզի ճանապարհին նույնպես շատ քչերն են գիտակցում այդ ամենը, այսինքն այն, թե աշխատանքի որ փուլում է անհրաժեշտ համապատասխան ուղղությամբ շարժվել: Շատերը կանգ են առնում՝ ունենալով որոշակի ձեռքբերումներ ու այլևս առաջ չեն շարժվում:

Ուղիները միմյանցից տարբերվում են նաև ուսուցիչների կամ առաջնորդների հետ ունեցած հարաբերություններով:

Ֆաքիրի ուղու վրա մարդը, բառիս բուն իմաստով, չունի ուսուցիչ: Ուսուցիչը չի սովորեցնում, այլ պարզապես օրինակ է ծառայում: Աշակերտի աշխատանքը կայանում է ուսուցչին ընդօրինակելու մեջ:

Վանականի ուղու վրա մարդն ունի ուսուցիչ, և իր պարտքն ու աշխատանքն է ուսուցչի նկատմամբ ունենալ բացարձակ հավատք, նրան հպատակվել և *հնազանդվել*: Սակայն վանականի ուղու վրա առաջնայինը Աստծո նկատմամբ տաճած հավատքն է, Նֆրա հանդեպ տաճած սերը, որի հիմքում ընկած են Աստծուն հնազանդվելու և ծառայելու մշտական ջանքերը, չնայած այն բանի, որ Աստծո մասին, ինչպես նաև նրան

ծառայություն մատուցելու մասին, պատկերացումները կարող են սուբյեկտիվ և հակասական լինել:

Յոգի ուղու վրա մարդը որևէ բան չի կարող և չպետք է անի առանց ուսուցչի: Սկզբում նա պետք է ֆաքիրի պես ընդօրինակի և վանականի պես հավատա իր ուսուցչին: Սակայն ավելի ուշ յոգի ճանապարհին կանգնած մարդը աստիճանաբար դառնում է ինքն իր ուսուցիչը: Նա յուրացնում է իր ուսուցչի մեթոդները և հետզհետե սովորում, թե ինչպես կարելի է կիրառել դրանք:

Սակայն բոլոր ուղիները՝ ֆաքիրի ուղին, վանականի ուղին և յոգի ուղին, մեկ ընդհանրություն ունեն: Դրանք բոլորն էլ սկսվում են ամենախրթին տեղից՝ կյանքի ամբողջական փոփոխությունից, որ ստիպում է նրանց հրաժարվել այն ամենից, ինչ աշխարհիկ է: Նրանք հրաժարվում են իրենց տնից, ընտանիքից, բոլոր հաճույքներից, կապերից, կյանքի պարտականություններից և հեռանում անապատ, վանք կամ յոգերի դպրոց: Հենց առաջին օրվանից, ճանապարհի վրա դրած առաջին քայլից նրանք մահացած են աշխարհի համար. միայն այս կերպ նրանք կարող են հուսալ, որ այս ուղիներից մեկի վրա որևէ բան ձեռք կբերեն:

Տվյալ ուսմունքի էությունը ըմբռնելու համար անհրաժեշտ է հասկանալ, որ *ուղիները* մարդու թաքնված հնարավորությունների զարգացման միակ հնարավոր միջոցն են: Սա իր հերթին ապացուցվում է, թե որքան բարդ և հազվադեպ է նման զարգացումը: Այս հնարավորությունների զարգացումը օրինաչափություն չէ: Մարդու համար օրենք/օրինաչափություն է մեխանիկական ազդեցությունների մեջ գոյատևելը՝ մեքենա-մարդու կարգավիճակը: Թաքնված հնարավորությունների զարգացումն ուղի է *ընդդեմ* բնության, ընդդեմ Աստծուն: Սա բացատրում է ուղիների խրթին և բացառիկ լինելը: Ճանապարհները նեղ են և ուղիղ: Սակայն ցանկացած բան կարելի է միայն նրանց միջոցով ձեռք բերել: Առօրյա՝ հատկապես ժամանակակից կյանքի ուղիները, փոքր, գրեթե աննշմարելի երևույթներ են, որոնք կենսական տեսանկյունից գոյության կարիք չունեն: Սակայն այս փոքր երևույթները պարունակում են *այն ամենը*, ինչ անհրաժեշտ է մարդուն՝ իր թաքնված հնարավորությունները զարգացնելու համար: Ուղիներն առօրյա կյանքին հակադիր են, հիմնված են այլ սկզբունքների վրա և ենթակվում են այլ օրենքների: Հենց սրանում է կայանում նրանց ուժն ու նշանակությունը: Առօրյա կյանքում, եթե նույնիսկ այն լեցուն է գիտական, փիլիսոփայական, կրոնական կամ հասարակական հետաքրքրություններով, չկա որևէ բան և *չի էլ կարող*, որը կտար այն հնարավորությունները, որ տալիս են այս ուղիները: Ուղիները տանում են կամ պետք է տանեն դեպի անմահություն: Առօրյա կյանքը, նույնիսկ իր լավագույն դրսևորումներով, մարդուն տանում է միմիայն դեպի մահ. որևէ այլ բանի չի կարող բերել այն:

Հնարավոր չէ ուղիների գաղափարը հասկանալ, եթե ընդունենք, որ մարդու էվոլյուցիան հնարավոր է առանց այս ուղիների միջամտության:

Որպես կանոն, մարդու համար դժվար է այս մտքի հետ համակերպվելը: Դա նրա համար չափազանցված, անարդար և անհեթեթ է

թվում: Նա ճիշտ չիէ ընկալում «հնարավորություն» բառի նշանակությունը: Նրա պատկերացումների համաձայն՝ եթե նա ունի որևէ հնարավորություն, ապա անհրաժեշտ է այն զարգացնել. իր շրջակա միջավայրում պետք է որ լինեն միջոցներ դրանք զարգացնելու համար: Չցանկանալով ընդունել իր մոտ որևէ հնարավորությունների գոյությունը՝ մարդը սովորաբար շարունակում է պահանջել այս հնարավորությունների պարտադիր և անխուսափելի զարգացումը: Նրա համար դժվար է ընդունել այն փաստը, որ իր հնարավորությունները կարող են ընդհանրապես չզարգանալ և անհետանալ, ինչպես նաև այն, որ դրանց զարգացումը պահանջում է ահռելի ջանքեր և դիմացկունություն: Փաստորեն, եթե վերցնենք բոլոր այն մարդկանց, որոնք ոչ ֆաքիրներ են, ոչ վանականներ, ոչ էլ յոգեր, ապա մենք վստահությամբ կարող ենք ասել, որ նրանց հնարավորությունները *չեն կարող զարգանալ և չեն զարգանա*: Այս ամենը պետք է հստակորեն պատկերացնել ըմբռնելու համար հետևյալըՖ. Բարեկիրթ կյանքի հասարակ պայմաններում մարդու կարգավիճակը, նույնիսկ գիտելիքներ որոնող խելացի մարդունը, անհույս է, քանզի նրան շրջապատող պայմանները շատ տարբեր են ֆաքիրի և յոգի դպրոցներից: Մինչդեռ Էսրայի կրոնները այն աստիճան են այլասերվել, որ երկար ժամանակ է արդեն նրանցում որևէ կենդանություն չկա: Տարբեր օկուլտ և միստիկ հասարակությունները և սպիրիտուալիստական ոգի ունեցող պարզամիտ փորձարկումները չեն կարող որևէ արդյունք ունենալ:

Եվ իրադրությունն իսկապես անհուսալի կլիներ, եթե չորրորդ ուղու հնարավորությունը գոյություն չունենար:

Չորրորդ ուղին չի պահանջում մարդկանցից մեկուսանալ անապատում, հրաժարվել և մերժել այն ամենը, որով նա ապրում է: Չորրորդ ուղին յոգի ուղուց ավելի այն կողմ է սկսվում: Դա նշանակում է, որ մարդը պետք է պատրաստ լինի չորրորդ ուղու համար, և այդ նախապատրաստվածությունը անհրաժեշտ է ձեռք բերել առօրյա կյանքում. այն պետք է լինի լուրջ և բազմակողմանի: Դեռ ավելին՝ մարդը պետք է չորրորդ ուղու վրա կատարվող աշխատանքին նպաստող պայմաններում ապրի, կամ առնվազն այնպիսի պայմաններում, որոնք տվյալ աշխատանքն անհնարին չեն դարձնի: Անհրաժեշտ է հասկանալ, որ մարդու կյանքում՝ ներքին և արտաքին, կարող են ստեղծվել պայմաններ, որոնք չորրորդ ուղուն հասնելու ճանապարհին կառաջացնեն անհաղթահարելի պատնեշներ: Բացի այդ, չորրորդ ուղին հստակ ձև չունի, ինչպիսիք են ֆաքիրի, վանականի կամ յոգի ուղիները: Առաջին հերթին՝ անհրաժեշտ է այն *գտնել*: Սա առաջին փորձությունը կլինի: Այս ուղին այդքան հայտնի չէ մարդկանց, որքան մնացած երեք ավանդական ուղիները: Շատերը երբևիցե չեն լսել չորրորդ ուղու մասին, իսկ մյուսները հրաժարվում են ընդունել դրա գոյությունը: Միևնույն ժամանակ չորրորդ ուղու սկիզբն ավելի հեշտ է, քան ֆաքիրինը, վանականինը կամ յոգինը: Չորրորդ ուղու դեպքում՝ հնարավոր է աշխատել և դառնալ այդ ուղու հետևորդը՝ չհրաժարվելով կյանքի սովորական պայմաններից, շարունակելով կատարել ամենօրյա աշխատանքը, պահպանելով մարդկանց հետ հարաբերությունները և

չգրկվելով որևէ բանից: Հակառակը՝ կյանքի այն պայմանները, որում հայտվում է մարդն իր աշխատանքի սկզբնական շրջանում կամ որում աշխատանքն, այլ կերպ ասած, գտնում է նրան, լավագույններից են, համենայն դեպս՝ աշխատանքի սկզբնական փուլում: Այս պայմանները բնական են նրա համար: Այս պայմանները հենց *մարդն ինքն է*, քանի որ մարդու կյանքը և կյանքի պայմանները համապատասխանում են նրա էությանը: Բոլոր այն պայմանները, որոնք տարբերվում են կյանքի կողմից ստեղծված պայմաններից, մարդու համար արհեստական են, և նման արհեստական պայմաններում աշխատանքը միաժամանակ չէր կարող բոլոր կողմերից շոշափել նրա գոյը:

Չորրորդ ուղին միաժամանակ ներագրում է մարդու էության բոլոր կողմերի վրա: Դա աշխատանք է երեք սենյակների վրա միաժամանակ: Ֆաքիրը աշխատում է առաջին սենյակի վրա, վանականը՝ երկրորդ, յոզը՝ երրորդ: Հասնելով չորրորդ սենյակ՝ ֆաքիրը, վանականը և յոզն իրենց ետևում շատ անավարտ գործեր են թողնում և չեն կարողանում կիրառել այն ինչ ձեռք են բերել, քանի որ իրենք բոլոր իրենց գործառնությունների *վարպետը* չեն: Ֆաքիրը իր մարմնի վարպետն է, բայց ոչ իր զգացմունքների կամ մտքի: Վանականը իր զգացմունքների վարպետն է, բայց ոչ իր մարմնի կամ մտքի, յոզն իր բանականության վարպետն է, բայց ոչ իր մարմնի կամ զգացմունքների:

Չորրորդ ուղին տարբերվում է մյուս ուղիներից նրանով, որ մարդու առջև հիմնական պահանջը հասկացողության պահանջն է: Մարդը չպետք է անի այն, ինչ չի հասկանում, բացառությամբ փորձարկումների՝ ուսուցչի վերահսկողության և ուղղորդության ներքո: Որքան շատ է մարդը գիտակցում իր անելիքը, այնքան արգասավոր կլինեն նրա թափած ջանքերից ստացված արդյունքները: Սա չորրորդ ուղու հիմնարար սկզբունքն է: Աշխատանքի արդյունքները համաչափ հարաբերության մեջ են գիտակից աշխատանքի նկատմամբ: Չորրորդ ուղու վրա որևէ «հավատք» չի պահանջվում: Ընդհակառակը՝ որևէ տեսակի հավատքը հակադիր է չորրորդ ուղուն: Չորրորդ ուղու վրա մարդը պետք է բավարարվի այն ճշմարտությամբ, որ իրեն ասվում է: Եվ մինչև բավարարված չզգա, որևէիցե բան չպետք է ձեռնարկի:

Չորրորդ ուղու մեթոդը բաղկացած է նրանից, որ առաջին սենյակում որևէ գործողություն կատարելիս, զուգահեռ աշխատանք է տարվում նաև մյուս երկու սենյակներում. այսինքն՝ ֆիզիկական մարմնի վրա աշխատանք տանելով, միաժամանակ աշխատանք է տարվում բանականության և զգացմունքների վրա: Կամ մտքի վրա աշխատելիս՝ աշխատանք է տարվում նաև ֆիզիկական մարմնի և զգացմունքների վրա, զգացմունքների վրա աշխատելիս՝ աշխատանք է տարվում նաև մարմնի վրա: Այս ամենին կարելի է հասնել շնորհիվ այն փաստի, որ չորրորդ ուղու վրա կարելի է օգտագործել որոշակի գիտելիքներ, որոնք հասու չեն ֆաքիրի, վանականի և յոզի ընտրած ուղիներին: Տվյալ գիտելիքը հնարավոր է դարձնում միաժամանակ աշխատել երեք ուղղություններով: Այս նպատակին են ծառայում մի շարք զուգահեռաբար տարվող ֆիզիկական, մտավոր և

զգայական վարժությունները: Բացի դրանից՝ չորրորդ ուղու ժամանակ հնարավոր է յուրաքանչյուր անձի աշխատանքն անհատականացնել, այսինքն՝ յուրաքանչյուր անձ կարող է անել այն, ինչ իրեն անհրաժեշտ է, այլ ոչ թե այն, ինչ *անհմաստ է* և իր համար: Սա պայամանավորված է այն փաստով, որ չորրորդ ուղին բացառում է այն ամենն, ինչ մակերեսային է և ինչը մյուս ուղիներում պարզապես պահպանվել է ավանդույթների շնորհիվ:

Այսպիսով, երբ մարդը կամք է ձևավորում չորրորդ ուղու վրա, նա կարող է կիրառել այն, քանի որ նա վերահսկում է բոլոր իր մարմնական, զգացական և մտավոր գործառնությունները: Բացի այդ, նա ժամանակ է խնայել՝ զուգահեռ և համաժամյա աշխատանք կատարելով իր բոլոր երեք կողմերի վրա:

Չորրորդ ուղին երբեմն կոչվում է *խորամանկ մարդու ուղի*: «Խորամանկ մարդը» տիրապետում է մի գաղտնիքի, որի մասին ֆաքիրը, վանականը կամ յոզը չգիտեն: Թե ինչպես է «խորամանկ մարդն» իմացել այս գաղտնիքը հայտնի չէ: Միգուցե նա կարդացել է դրա մասին հնագույն գրքերում, միգուցե ժառանգել է այն, գնել կամ հափշտակել ինչ-որ մեկից: Տարբերություն չկա: «Խորամանկ մարդը» գիտի գաղտնիքը և հենց դրանով գերազանցում է ֆաքիրին, վանականին և յոզին:

Չորսի միջից ֆաքիրը գործում է ամենաբոխի կերպով. նա շատ քիչ գիտի և շատ քիչ է հասկանում: Ենթանդրենք, որ ամբողջ մեկ ամսվա ինտենսիվ չարչարանքներից հետևանքով նա իր մեջ զարգացնում է որոշակի էներգիա, որոշակի սուբստանցիա, որը նրա մեջ որոշակի փոփոխություն է առաջացնում: Նա այդ ամենն անում է կուրորեն, աչքերը փակ՝ չունենալով որևէ նպատակ, մեթոդներ կամ արդյունքներ. նա պարզապես ընդօրինակում է մյուսներին:

Վանականը մի քիչ ավելի լավ գիտի, թե ինչ է ցանկանում: Նա առաջնորդվում է կրոնական զգացողությամբ, կրոնական ավանդույթներով, ձեռքբերումների մղումով և այդ ամենը՝ հանուն փրկության: Նա վստահում է իր ուսուցչին, որն ասում է նրան ինչ անել: Նա հավատում է, որ իր ջանքերը և գոհաբերությունները «հաճո են Աստծուն»: Ենթադրենք՝ մեկ շաբաթվա պահքը, շարունակական աղոթքը, գրկանքները և այլն հնարավորություն են տալիս նրան զարգացնել այն, ինչ ֆաքիրը զարգացնում է իր մոտ մեկամսյա ինքնակտտանքների միջոցով:

Յոզը զգալիորեն ավելի շատ բան գիտի: Նա գիտի, թե ինչ է ցանկանում, գիտի, թե ինչու է ցանկանում և գիտի, թե ինչպես կարող է ձեռք բերել ցանկալին: Օրինակ՝ նա գիտի, որ իր նպատակին հասնելու համար նա իր մեջ պետք է որոշակի սուբստանցիա առաջացնի: Նա գիտի, թե ինչպես կարելի է տվյալ սուբստանցիան մեկ օրվա ընթացքում զարգացնել՝ որոշակի մտավոր վարժությունների կամ մտքի կենտրոնացման միջոցով: Հետևաբար նա մեկ ամբողջ օր իր ուշադրությունն ուղղում է այս վարժություններին՝ թույլ չտալով որևէ արտաքին մտքի միջամտություն. և նա ձեռք է բերում այն, ինչ անհրաժեշտ է նրան: Այսպիսով, յոզը նույն նպատակին հասնելու համար մեկ օր է ծախսում՝ ի տարբերություն

Ֆաբրիին, ով մեկ ամիս է ծախսում, և վանականին, ով մեկ շաբաթ է ծախսում:

Մակայն չորրորդ ուղու վրա գտնվող գիտելիքը ավելի ճշգրիտ է և անթերի: Այն մարդը, որ հետևում է չորրորդ ուղուն, բավականին հստակ պատկերացում ունի այն մասին, թե ինչպիսի սուբստանցիաներ են նրան անհրաժեշտ՝ իր նպատակներին հասնելու համար. նա գիտի, որ տվյալ սուբստանցիաները մարմնի ներսում կարելի է առաջացնել մեկ ամսվա ընթացքում՝ ֆիզիկական տանջանքների միջոցով, մեկ շաբաթում՝ զգացական պրկման միջոցով կամ մեկ օրում՝ մտավոր վարժությունների միջոցով, ինչպես նաև այն, որ *դրանք կարելի է ներմուծել օրգանիզմ դրսից, եթե հայտնի է, թե ինչպես կարելի է դա անել*: Եվ յոգի պես ամբողջ օրը մտավոր վարժությունների վրա վատնելու փոխարեն, վանականի մեկ շաբաթվա և ֆաբրիի մեկ ամսյա ինքնախոշտանգման փոխարեն, նա պարզապես պատրաստում և կուլ է տալիս մի փոքրիկ հաբ, որ պարունակում է նրան անհրաժեշտ բոլոր սուբստանցիաները. այսպիսով, առանց ժամանակի կորստի նա ձեռք է բերում անհրաժեշտ արդյունքները:

-Պետք է նաև նշել, - ասեց Գ.-ն,- որ այս պատշաճ և օրինական ուղիներից բացի գոյություն ունեն արհեստական ուղիներ, որոնք տալիս են միայն ժամանակավոր արդյունքներ. գոյություն ունեն նաև սխալ ուղիներ, որոնք կարող են տալ մշտական արդյունքներ, սակայն միմիայն սխալ արդյունքներ: Այս ուղիներին մարդը փնտրում է նաև չորրորդ սենյակի բանալին և երբեմն գտնում է այն: Բայց, թե ինչ է գտնում նա չորրորդ սենյակում, դեռ հայտնի չէ: Պատահում է նաև, որ չորրորդ սենյակի դուռը բացվում է արհեստական բանալի-ագռավուկի միջոցով: Երկու դեպքերում էլ սենյակը հնարավոր է դատարկ լինի:

Այստեղ Գ.-ն կանգ առավ:

Հետևյալ գրույցներից մեկի ժամանակ մենք կրկին անդրադարձանք *ուղիներին*:

-Արևմուտքի ներկայացուցչի համար դժվար է հավատալ և ընդունել այն, որ տգետ ֆաբրիը, միամիտ վանականը կամ կյանքից մեկուսացած յոգը կարող են գտնվել Էվոյուցիայի ճանապարհին, մինչդեռ կրթված եվրոպացին, զինված լինելով «ճշգրիտ գիտելիքներով» և հետազոտության ամենաարդիական մեթոդներով, որևէ շանս չունի և ընթանում է մեկ շրջագծով, որից փախչելու հնարավորություն չկա, - ասեցի ես:

-Այո դա նրանից է, որ մարդիկ հավատում են առաջընթացին և մշակույթին, - ասեց Գ.-ն: *Որևէ առաջընթաց չկա*: Ամեն ինչ այնպես է, ինչպես հազարամյակներ և տասնյակ հազարամյակներ առաջ: Արտաքին ձևը փոխվում է: Էությունը չի փոխվում: Մարդիկ նույնն են մնում: «Քաղաքակիրթ» և «բարեկիրթ» մարդիկ ապրում են՝ պահպանելով նույն հետաքրքրությունները, ինչ ամենասոցիալական վայրագները: Ժամանակակից քաղաքակրթությունը հիմնված է բռնության, ստրկության և գեղեցիկ խոսքերի վրա: Մակայն «առաջընթացի» և «քաղաքակրթության» մասին բոլոր այս գեղեցիկ խոսքերը սոսկ խոսքեր են:

Այս խոսքերը իհարկե հատկապես մեծ տպավորություն գործեց մեզ վրա, քանի որ ասվում էիր 1916թ., երբ «քաղաքակրթության» վերջին դրսևորումը պատերազմների ձևով, որն աշխարհը չէր տեսել մինչ այժմ, շարունակում էր աճել ու զարգանալ՝ իր ուղեծրի մեջ ներառելով նորանոր միլիոնավոր մարդկանց:

Ես հիշեցի, որ այս գրույցից մի քանի օր առաջ տների առաջին հարկի բարձրությամբ երկու հսկա բեռնատար մեքենաներ տեսա Լիտեյնիի փոխոցի վրա, որ բեռնված էին նոր չներկված փայտե *հենակներով*: Ինչ-ինչ պատճառներով ինձ ապշեցրեցին այս բեռնատարները: *Դեռ չպատաստուոված ոտքերի համար նախատեսված* այս հենակների սարակույտում թաքնված էր խիստ ցինիկ ծաղրանքն այն ամենի հանդեպ, ինչ օգնում էր մարդկանց ինքնախաբեությամբ զբաղվել: Անկախ ինձնից ես պատկերացրեցի, որ նման բեռնատարներ են շրջում նաև Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում, Վիեննայում, Հռոմում և Կոնստանդնուպոլսում: Բոլոր այս քաղաքներում, որոնք ես այդքան լավ էի ճանաչում և սիրում այն պատճառով, որ դրանք այնքան տարբեր էին, լրացնում էին միմյանց և մեկը մյուսին հակադրվում, արդյունքում և՛ ինձ համար էին թշնամական դարձել, և՛ մեկը մյուսի համար. նրանց այժմ անջատում էին ասելության և հանցավորության պատերը: Ես հանդիպումներից մեկի ժամանակ մեր մարդկանց պատմեցի այս հենակներով բեռնված մեքենաների և դրանց վերաբերող իմ խոհերի մասին:

-Ի՞նչ էիր ակնկալում, - ասեց Գ.-ն: Մարդիկ մեքենաներ են: Մեքենաները պետք է կույր լինեն և անգիտակից, այլ կերպ չէր կարող լինել, և նրանց բոլոր գործողությունները պետք է համապատասխանեն իրենց էությանը: *Ամեն ինչ պարզապես տեղի է ունենում*: Որևէ մեկը որևէ բան չի անում: «Առաջընթացը» և «քաղաքակրթությունը», բառիս բուն իմաստով, կարող են երևան գալ միայն *գիտակից ջանքերի* արդյունքում: Դրանք չեն կարող երևան գալ անգիտակից մեխանիկական գործողությունների արդյունքում: Իսկ մեքենաները ինչպե՞ս կարող են գիտակից ջանքեր գործադրել: Եվ եթե մի մեքենան անգիտակից է, ապա հարյուրավոր մեքենաներ անգիտակից են. և նույնկերպ են հարյուր հազարավոր կամ միլիոն մեքենաները: Եվ *միլիոնավոր* մեքենաների անգիտակից գործունեությունը անխուսափելիորեն բերում է քայքայման և ոչնչացման: Հենց անգիտակից և ինքնաբուխ դրսևորումներն են ողջ չարիքի պատճառը: Դուք դեռ չեք հասկանում և չեք կարող պատկերացնել, թե ինչպիսին կարող են լինել այս չարիքի արդյունքները: Բայց կգա ժամանակ, երբ կհասկանաք դա:

Որքան հիշում եմ սրանով ավարտվեց գրույցը: